Ո՞ր գազը թանկացավ, ի՞նչ ենք անելու: Ես էս ժողովրդին չեմ հասկանում: Ռուսաստանը, եթե ինձ հարցնեք՝ աղքատ, կոռումպացված, բռնապետական երկիր է, բայց էդ մասին թող մտածեն ռուսները: Իսկ Հայաստանի համար կարող է լինել երաշխավոր: Դիզվառելիքի մասին Փաշինյանին հարցրեք, կասի՝ մեր անվտանգության երաշխավորը կտա:

Կարդացեք՝ էջ 4

Շիրակի մարզում 2020 թվականին հաշվառված է եղել 87 հազար 95 խոշոր եղջերավոր կենդանի, 2025թ. հունվարի 1-ի դրությամբ նվազել է 22 հազար 266-ով: Արագածոտնի մարզում 2020 թ. հունվարին՝ 68 հազար 215 խոշոր եղջերավոր կենդանի, 2025-ին՝ 53 հազար 411: Գրեթե բոլոր մարզերում կենդանիների գլխաքանակը պակասել է:

Կարդացեք՝ էջ 6



Աղասի Խանջյանը հովանավորում էր Չարենցին, Ակսել Բակունցին, Մարտիրոս Սարյանին, Ալեքսանդր Թամանյանին: Խանջյանի եւ Չարենցի հարաբերությունները դուրս էին պաշտոնական շրջանակից: Դա 2 բացառիկ անհատների դաշինք էր, որտեղ քաղաքական գործիչը հասկանում էր հանճարի արժեքը, պոետը՝ քաղաքական գործչի առաքելությունը:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 108 (4243), 2 հուլիս, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանը երեկ մատնել է իշխանության՝ Ռուսաստանից ունեցած վախերը: Պատասխանելով հարցին, թե TRIPP-ի իրականացման դեպքում ԵԱՏՄ կանոններն ու տարանցման կարգավորումներն ինչպես է պատկերացնում Երեւանը, Սաֆարյանը պատասխանել է. «Այս պահին Հայաստանի Հանրապետությունը ԵԱՏՄ անդամ է, եւ ԵԱՏՄ տարանցման կանոնները գործում են մեր տարածքում»: Այսինքն՝ TRIPP-ը լինելու է ԵԱՏՄ կարգավորումներով: «Այո»,- ասել է նա: Ստացվում է, որ ԱՄՆ նախագահ Թրամփի անունը կրող նախագիծը մտցվել է պուտինյան ԵԱՏՄ-ի ծրագրերի մեջ՝ մի բան, որի համար շուրջ մեկ տարի պայքարում էր ռուսական կողմը՝ ՀՀ իշխանություններին զգուշացնելով, որ չի կարող TRIPP-ը գործել, քանի որ Հայաստանում տարանցման կանոնները պետք է ենթարկվեն ԵԱՏՄ կանոններին, իսկ մեր իշխանություններն էլ համառորեն անտեսում էին այդ զգուշացումները: Քաղաքական կուլիսներում երեկ այս հայտարարությունը բուռն քննարկումների առիթ դարձավ, ոմանց կարծիքով, ՌԴ սանկցիաներն այնքան են խեղճացրել մեր իշխանություններին, որ ԱԳՆ պաշտոնյան չի ցանկացել ավելի սրել հայ-ռուսական հարաբերությունները, բայց հայ-ամերիկյան կոնֆլիկտի վտանգ է ստեղծել: Որ ռուսական կողմի գործողություններն անհանգստացնում են ՀՀ իշխանություններին, պարզ դարձավ եւս մեկ փաստից՝ պաշտոնական Կրեմլը հաղորդեց, որ հայկական կողմի նախաձեռնությամբ Փաշինյան-Միշուստին հեռախոսազրույց է տեղի ունեցել, քննարկել են «Հայաստան-ՌԴ փոխգործակցության օրակարգային հարցեր, որոնք վերաբերում են առեւտրատնտեսական, գիտատեխնոլոգիական եւ մշակութային-հումանիտար ոլորտներին»: Իսկ ՀՀ կառավարության հաղորդագրությունից դուրս էր մնացել այն, որ զրույցը հայկական կողմի նախաձեռնությամբ է եղել:

«Հրապարակ»-ի տեղեկություններով՝ օրեր առաջ Արարատի մարզի Արալեզ գյուղում այրվել է Արարատի նախկին մարզպետ, ԲՊ-ական Ռազմիկ Թեւոնյանի առանձնատունը: Մեզ պատմեցին, որ հրդեհի պատճառը եղել է օդորակիչը, այն ճիշտ միացված չի եղել հոսանքին, որից էլ հրդեհ է բռնկվել: Թեւոնյանների ազգակից, Արալեզի նախկին ղեկավար Մարտիկ Թեւոնյանը մեզ հետ զրույցում հաստատեց տեղեկությունը՝ նշելով, որ ընտանիքի անդամները քնած են եղել, օդորակիչի լարից հրդեհ է բռնկվել, սեւացել են տան պատերը, այրվել են վարագույրն ու բազմոցը: Նա նշեց, որ տան պատերը կանգուն են, միայն գույքային վնաս է եղել:

Պեռաշկի ուսողի արդարություն

Երեկ տեղեկացանք, որ դատախազության հիմնադրման օրվան նվիրված՝ «Ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույքի հետքերով. քրեական հետապնդում, գույքի վերականգնում եւ բռնագանձված գույքի կառավարում, քրեական արդարադատությունում զոհակենտրոն մոտեցման ամրապնդում» վերնագրով միջազգային համաժողով է կազմակերպվել, որին մասնակցել են եվրոպական երկրներից ժամանած դատախազներ, ԵՄ, ԵԽ պաշտոնյաներ, դեսպաններ, Հայաստանի բոլոր իրավապահ մարմինների ղեկավարները: Համաժողովում ելույթ է ունեցել նաեւ Նիկոլ Փաշինյանը: Ես կասեի՝ մի խայտառակ, հակաժողովրդավարական, հակաիրավական, պոպուլիստական ելույթ, որի իմաստը եթե կարճ ձեւակերպենք, ապա՝ պատրաստվում ենք ապօրինի գույքի անվան տակ մարդկանց գույքը խլել, որ հարուստներին ատողների՝ մեր ընտրողների սրտին «մի մատ յուղ նստի»: Մանվածապատ տեքստ, բառերի հեղեղ, ժողովրդի, լեգիտիմության, արդարության, արդարադատության մասին կեղծ խոսքեր, որից հասկանալի է, որ դրանք արտասանողն այդ հասկացությունների խորքային իմաստը չի հասկանում եւ կամայականորեն է մեկնաբանում՝ այս անգամ Եվրոպայից ժամանած, ենթադրում եմ՝ ապշած հյուրերի առաջ: Մի արտահայտություն հատկապես ուշադրությունս գրավեց՝ «Հայաստանում արդարության եւ արդարադատության հաստատման համար, ըստ էության, բոլոր հարցերը կամ հարցերի առնվազն մեծամասնությունը, որոնք դրվել են կառավարության առաջ, լուծել ենք»: Եվ այդ հյուրերից ոչ մեկը նրան հարց չտվեց՝ մի երկրում, որտեղ արդարադատության մարմիններն աշխատում են վարչապետի կամքով, որտեղ օրենքի թելադրանքին փոխարինել են վարչապետի լայվերն ու ստատուսները, որից նրանք որոշում են հերթական թիրախին եւ հարձակման անցնում, ինչ արդարության հաստատման մասին կարող է խոսք լինել:

Նորընտիր ԱԺ անդրանիկ նիստն օգոստոսի 3-ին կլինի, արդեն չորրորդ անգամ ավանդույթը չի խախտվի, եւ մինչ ԱԺ նախագահի ընտրվելը նիստը կվարի տարիքով ավագ պատգամավորը՝ Կնյազ Հասանովը: Նա պատգամավոր է ընտրվել ԲՊ-ի՝ փոքրամասնությունների ցուցակով: Ազգությամբ քուրդ պատգամավորը ՀՀԿ-ի ցուցակով 2017-ին է պատգամավոր դարձել եւ վարել անդրանիկ նիստը, ապա՝ 2018-ին, հետո՝ 2021-ին: Հասանովը մեզ ասաց, որ դեռ չգիտի՝ ինքն ընտրվել է, թե՝ ոչ: Եթե ընտրվել է, եւ եթե առաջարկեն, հաստատ չի մերժի: 81-ամյա Հասանովին հարցրինք՝ չի՞ հոգնել օրենսդիր աշխատանքից, ինչո՞ւ չգնաց թոշակի, որ երիտասարդների համար տեղ բացի: «Չէ, դեռ չեմ հոգնել, որ հոգնեմ, կգնամ»: Իմացանք՝ վատառողջ եք: «Վիրահատություն տարա, հիմա լավ եմ զգում»: Նիստին, ըստ կարգի, պետք է ներկա լինեն նաեւ ՀՀ նախագահն ու Վեհափառը, ինչպես 2021-ին էր: Սակայն ԲՊ-ում վստահ են, որ Վեհափառը ներկա չի լինի՝ չեն հրավիրի:

ՀՈՎԻԿՆ ՈՒ ՋՈՆԻԿԸ ՄԻԱՍԻՆ ԵՆ ԴԱՏՎՈՒՄ

«Հրապարակ»-ի տեղեկություններով՝ փոդերի լվացման, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու մեղադրանքներով նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի քրեական գործին է միացվել նրա եղբոր՝ Հենրիկ (Զոնիկ) Աբրահամյանի նկատմամբ վարույթը: Նախկին վարչապետի գործը քննող՝ Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Արամ Գրիգորյանը որոշել է եղբայրների գործերը քննել մեկ վարույթում՝ իր նախագահությամբ: Հենրիկ Աբրահամյանի գործով մեղադրյալի աթոռին են նա ու որդին՝ Հովհաննեսը: Վերջինս, ըստ մեղադրանքի, որպես «Մեծն Հովնան» ՍՊԸ-ի տնօրեն, խախտել է շրջակա միջավայրի պահպանության, ինչպես նաեւ ընդերքի օգտագործման եւ պահպանության կանոնները՝ անզգուշությամբ առաջացնելով ծանր հետեւանքներ եւ էական վնաս հասցրել շրջակա միջավայրին: Բացի այդ, «օժանդակել է պաշտոնատար անձ Հովիկ Աբրահամյանին՝ ապօրինի մասնակցել ձեռնարկատիրական գործունեությանը»: Հենրիկ Աբրահամյանը, ըստ իրավապահների, երկու դրվագով օժանդակել է Հովիկ Արգամի Աբրահամյանին՝ «ապօրինի մասնակցել ձեռնարկատիրական գործունեությանը, ինչպես նաեւ օժանդակել է նրա կողմից պաշտոնեական լիազորություններն անցնելուն»: Հակակոռուպցիոն դատարանից, ի պատասխան մեր հարցին, հաստատեցին տեղեկությունը, որ եղբայրների գործերը քննվում են մեկ վարույթով:

ՀՈՒԼԻՍԻ 1

ՆՊԱՍՏԱՌՈՒՆԵՐԻ 54 ՏՈԿՈՍԸ ԶՐԿՎԵԼ Է ՆՊԱՍՏԻՑ

Հուլիսի 1-ից Հայաստանում ներդրվեց անապահովության գնահատման նոր համակարգ: Սակայն այս որոշումը Նիկոլ Փաշինյանի կառավարությունն ընդունել էր դեռեւս 2025 թվականին. այն ժամանակ որոշվել էր համակարգը փորձնական ներդնել միայն Կոտայքի եւ Սյունիքի մարզերում, իսկ այս տարվա հունիսի 11-ին կառավարության ընդունած որոշմամբ՝ նոր համակարգը հուլիսի 1-ից, իբրեւ թե պիլոտային ծրագիրն արդարացրել է

իրեն, ներդրվեց հանրապետության ողջ տարածքում:

Մենք արդեն գրել ենք, որ հարյուրավոր ընտանիքներ հունիսի 1-ի նպաստը չստանալով՝ տեղեկացել են, որ իրենք այլեւս անապահով չեն համարվում: Նպաստառուների ցանկից շատերի դուրս մնալու պատճառը 10 հազար դրամով թոշակի ավելացումն ու 10 հազար դրամ հետվճարն է դարձել կամ առողջապահության ապահովագրության ներդրումը: Ինչ-որ հաշվարկներով, շատ ավելի մեծ թվով ընտանիքներ զրկվեցին նպաստից, քան շահեցին կենսաթոշակների բարձրացումից ու անվճար բժշկական սպասարկումից: Ընդ որում, իշխանությունը դա արել է խորամանկորեն՝ թոշակներն ավելացել են ապրիլից, իսկ նպաստները կտրել են հունիսից, որ ընտրությունների շեմին մարդիկ չիմանան այդ մասին՝ գնան ու ՔՊ-ին ընտրեն:

«Ուժեղ Հայաստան» կուսակցության պատգամավորի թեկնածու Իրինա Յոլյանը երեկ ահազանգել էր, որ Սյունիքում 869 ընտանիք զրկվել է նպաստից: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության մեր աղբյուրը հայտնում է, որ գնահատման նոր համակարգի կիրառման արդյունքում նպաստառուների 70-80 տոկոսը զրկվելու է նպաստից:

Մեր աղբյուրն ասում է, որ մինչեւ 2018 թվականը Հայաստանում ընտանեկան նպաստ էր ստանում 100 հազար ընտանիք: Այս տարվա հունիսի 1-ի դրությամբ այդ ընտանիքների քանակը կազմել է 46 հազար, թեեւ աղքատությունը չի նվազել երկրում: Պարզ մաթեմատիկական հաշվարկով ստացվում է, որ 8 տարում նպաստ ստացող ընտանիքների քանակն ավելի քան 54 տոկոսով նվազել է: Հունիսի 7-ից առաջ ընտրողին կաշառեցին՝ 10 հազար դրամով թոշակ բարձրացրին, իսկ հիմա նպաստառուների «քթից են բերում»՝ թոշակների փողը նրանցից գանձում:

Մեր աղբյուրի պնդմամբ՝ եթե փորձնական ծրագրի իրականացումից առաջ՝ 2025 թվականի սկզբին, Կոտայքի մարզում ընտանեկան նպաստ էր ստանում 3 հազար 762 ընտանիք, գնահատման նոր չափանիշների ներդրումից հետո ստանում է ընդամենը 1 125-ը, սակայն սա էլ վերջնական թիվ չէ, հնարավոր է, որ 1 125-ի մի մասն էլ կրճատվի: Ստացվում է, որ եթե Սյունիքում 869 ընտանիք է զրկվել նպաստից, ապա Կոտայքում նպաստից զրկվածների թիվը կազմում է 2 հազար 637: Մեր աղբյուրը նաեւ ասաց, որ Տավուշի մարզում էլ 3 հազար 680 նպաստառուներից մոտ 2000-ն է զրկվելու նպաստից:

Միասնական սոցիալական ծառայության Իջեւանի կենտրոնի պետ Մեսրոպ Մխիթարյանը մեզ հետ զրույցում ասաց, որ չի կարող հստակ թվեր տրամադրել մեզ, քանի որ «դա գաղտնիք է»: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից նույնպես հրաժարվեցին մեզ կոնկրետ թվեր տրամադրելուց, հրաժարվեցին նաեւ տրամադրել կարիքների գնահատման նոր չափանիշները, սակայն մեզ հաջողվեց մեր աղբյուրներից ստանալ դրանք: Նոր անապահովության համակարգի համաձայն՝ այն ընտանիքները, որոնք կդիմեն նպաստ ստանալու համար, պետք է համապատասխանեն մի շարք պահանջների:

Դրանք են.

շարժական գույք - եթե ունեք ավտոմեքենա, որի գույքահարկը բարձր է սահմանված չափից (2015-ից բարձր արտադրության մեքենա կամ 12 հազար դրամ + գույքահարկով)

անշարժ գույք - եթե ունեք տուն կամ այլ շինություն, որի գույքահարկը գերազանցում է սահմանաչափը (4 հազար 200 դրամ՝ մարզերում, 12 հազար դրամ՝ Երեւանում)

ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը (բացի անհատ ձեռներեցությունից, եթե չունի վարձու աշխատող)

վարկային պարտավորություններ - սահմանված շեմը գերազանցելու պարագայում (յուրաքանչյուր չափահասի հաշվով՝ նվազագույն պարենային զամբյուղի չափով)

մաքսավճարներ - եթե կատարել եք ապրանքների ներմուծման կամ արտահանման մաքսային վճարներ (յուրաքանչյուր չափահասի հաշվով՝ նվազագույն պարենային զամբյուղի չափով)

էլեկտրաէներգիա - եթե ամառային ամիսներին էլեկտրաէներգիայի ծախսը գերազանցում է թույլատրելի շեմը: Այն հաշվարկվում է այսպես՝ 90 կՎտ ժամ (ամբողջ ընտանիքին) + 20-ական կՎտ ժամ ամեն անդամի համար (օրինակ՝ 4 հոգանոց ընտանիքի համար շեմը 170 կՎտ ժամ է (90+4×20))

Բնական գազ - եթե տարեկան սպառումը գերազանցում է սահմանված շեմը՝ 600 խմ (ամբողջ ընտանիքին) + 110-ական խմ՝ ամեն անդամի համար

Բարեկեցության գնահատում - տնայցի (Միասնական սոցիալական ծառայության մասնագետն այցելում է ձեր բնակարան) արդյունքում ընտանիքը բարեկեցիկ ճանաչելու հանգամանքը

այլ հիմքեր. անշարժ գույքի գրավադրմամբ վարկի առկայությունը, ընտանիքում պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխա ունենալը:

Նկատենք, որ անապահովության պահանջները տարեցտարի խստացվել են՝ մի նպատակով, որ հնարավոր քիչ ընտանիքներ համապատասխանեն այդ պահանջներին, եւ իշխանությունը կարողանա հայտարարել, որ աղքատությունը երկրում կրճատվել է, իսկ նպաստների կրճատումից խնայողություններ անեն, որ պետական ապարատի, իշխող վերնախավի պարգեւավճարներն ավելացնեն:

Մեր աղբյուրն ասում է, որ առաջիկայում էլի մոտ 35 հազար նպաստառու զրկվելու է հասանելիք նպաստից: Մենք հետաքրքրվեցինք՝ որքա՞ն նպաստ է ստանում մեկ անապահով ընտանիքը: Նախարարության մեր աղբյուրն ասաց, որ կոնկրետ թիվը կախված է ընտանիքի անդամների քանակից, այն կարող է 35 հազարից հասնել 90 հազարի:

Էջը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆԱՊԱՀՈՎՆԵՐՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԿՍՏԱՆԱՆ, ՄՆԱՑԱԾԻՆ ԿԱՍԻ՝ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ ԳԼԽՈՒՄ Է

Մեր հարցերին պատասխանում է «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր **Մանե Թանդիլյանը**:

- Նիկոլ Փաշինյանը խորհրդարանական ընտրություններից ուղիղ երկու ամիս առաջ թոշակները բարձրացրեց 10 հազար դրամով, իսկ հուլիսի 1-ից նպաստառուներին անակնկալ մատուցեցին՝ անապահովության գնահատման կարգը փոխվել է, եւ նրանցից շատերը զրկվել են նպաստից: Մեր տեղեկություններով, նպաստառուների կեսից ավելին զրկվելու է նպաստից: Միայն Սյունիքում, Իրինա Յոլյանի տվյալներով, մոտ 800-ից ավելի նպաստառու ընտանիք զրկվել է նպաստից: Ի՞նչ գնահատական կտաք այս փոփոխությանը:

- Անապահովության նպաստառուների՝ նպաստից զրկվելը կարող է տեղի ունենալ երկու պատճառով. կամ այլեւս անապահով չեն՝ ունեն բավարար եկամուտ, կամ՝ օրենքի փոփոխության հետեւանքով: Այս դեպքում կատարվել է վերջինը. փոփոխության է ենթարկվել գնահատման համակարգը, եւ մարդիկ դուրս են մնացել համակարգից: Ինչպես հասկանում եք, սա ամենեւին չի նշանակում, որ այդ մարդիկ ավելի լավ են ապրում, կամ որ էական փոփոխություն է տեղի ունեցել իրենց կյանքում: Ընդամենը Նիկոլ Փաշինյանի կառավարությունը որոշել է, թե այսուհետ ում է համարում անապահով, ում՝ ոչ:

- Նոր չափանիշներին ծանո՞թ եք: Եթե, օրինակ, էլեկտրաէներգիայի ծախսի շեմը գերազանցում է թույլատրելի շեմը, ապա տվյալ ընտանիքն անապահով չի համարվում:

- Նոր համակարգով ի հայտ են եկել անապահովության համակարգից ավտոմատ դուրս թողնելու, այսպես կոչված, «բացառող գործոններ», որոնց առկայության դեպքում ընտանիքներն ավտոմատ դուրս են մնում համակարգից: Ճիշտ եք, որ դրանցից է նաեւ կոմունալ՝ էլեկտրաէներգիայի, գազի ծախսերի թույլատրելի շեմը գերազանցելու հանգամանքը: Բացառող գործոն կարող են լինել նաեւ շարժական կամ անշարժ գույքի առկայությունը, որոշ դրամական գործարքներ եւ այլն: Սակայն ավտոմատ դուրս թողնելը կարող է բերել անհամաչափ եզրակացության: Այդ գործոնների առկայությունն անպայմանորեն չի նշանակում, որ մարդն ապահով է: Տարբեր պատճառներով կարող են այդ գործոններն ի հայտ գալ, եւ առանց ուսումնասիրության մարդկանց համակարգից դուրս թողնելը, քաշքշուկների մեջ գցելն ու տարիներով լուծում չտալը կարող են ծանր սոցիալական իրականության առջեւ կանգնեցնել այդ ընտանիքներին: Ու դրա համար ոչ ոք պատասխան չի տա:

- Իսկ ո՞րն է իշխանության նպատակը:

- Նիկոլ Փաշինյանի կառավարությունը նպատակ ունի պոպուլիստական արձանագրումներ եւ հայտարարություններ անելու՝ ասելով, որ, օրինակ, Հայաստանում այլեւս ծայրահեղ աղքատ մարդ չկա, քանի որ համակարգն առանձնացնում է ծայրահեղ անապահովներին ապահովներից: Հետեւաբար, նա նույնքան գումարը կբաշխի ավելի քիչ մարդկանց, բայց ավելի բարձր արժեքով, իսկ մնացածին կասի՝ աղքատությունը ձեր գլխի մեջ է, Հայաստանի Հանրապետությունում ոչ մի հպարտ քաղաքացի ծայրահեղ աղքատ չէ, քանի որ համակարգի միջոցով ծայրահեղ անապահովները կստանան ավելի շատ գումար: Սակայն սրա վտանգն այն է, որ բազմաթիվ ընտանիքներ դուրս կմնան սոցիալական աջակցության ծրագրերից: Ես չգիտեմ՝ այդ մարդիկ արդեն կարողացել են գտնել համարժեք եկամտի աղբյուր, եթե ոչ՝ նրանց դժվար օրեր են սպասվում:

- Երբ Դուք նախարար էիք, ինչպե՞ս էր ոլորտն աշխատում: Ինչպե՞ս էր որոշվում, թե որ ընտանիքն է անապահով:

- Առկա էր անապահովության գնահատման համակարգ, որը հաշվի էր առնում սոցիալական վիճակը ընտանիքի եւ/կամ անձի: Իրականում, փոփոխության կարիք կա՝ համակարգն ավելի հասցեական դարձնելու իմաստով, եւ նոր համակարգերը ներդնելիս պետք է լիարժեքորեն ուսումնասիրել, թե այդ ինչ ընտանիքներ են դուրս մնում նոր համակարգի պարագայում, որքանով է այն իրապես արտահայտում այդ ընտանիքի կենսունակությունն առանց սոցիալական աջակցության, այդ ընտանիքների հետ աշխատանք տանել, ժամանակ տալ եւ այլ համակարգային լուծումներ ներդնել, որպեսզի փոփոխությունները ցավոտ եւ աղետալի չլինեն այդ ընտանիքների համար: Տեղյակ չեմ՝ նման աշխատանք արվել է, թե ոչ, բայց ճանաչելով այս կառավարության աշխատանքային անպատասխանատու ձեռագիրը, ինչ-որ բան ինձ հուշում է, որ չի արվել:

ՏՈՒՆՈՒՄ

ՑԱՆԿԱՑԱԾ ԼՈՒԾՈՒՄ ԼԻՆԵԼՈՒ Է ՑԱՎՈՏ

Դարցազրույց «Ուժեղ Հայաստան» կուսակցության պատգամավորության թեկնածու, ցուցակի 7-րդ համար **Մամիկոն Ասլանյանի** հետ

- Ի՞նչ ակնկալիք ունեք Սահմանադրական դատարանում քննությունից, եւ ո՞րն է լինելու ընդդիմության արձագանքը, եթե ՍԴ-ն չբավարարի ընդդիմության պահանջները:

- Անկախ նրանից, թե ՍԴ-ն ինչ որոշում կկայացնի, պիտի առաջնորդվի նրանով, որ ՀՀ գեթ մեկ քաղաքացու մոտ չփարատված կասկածներ չմնան, եւ ցույց տա բարձր դատարանի դերն ու նշանակությունն այս խայտառակ ընտրություններից հետո: Կուզենամ, որ ՍԴ-ն զերծ մնա քաղաքական որեւէ նախապաշարմունքից ու կանխատեսելիությունից եւ կայացնի իրավական որոշում:

- Լսելով ՍԴ դատավորների քաղաքական ելույթներն ու հայտարարությունները՝ նման ակնկալիք հնարավո՞ր է ունենալ:

- Քանի դեռ չկա որոշում, ես չեմ ցանկանում գնահատական տալ, ուզում եմ՝ ՍԴ-ն, որպես իրավական կառույց, իրավական որոշում կայացնի:

- Հակառակ պարագայում ընդդիմությունն անելիք ունի՞:

- Բնականաբար, ընդդիմության անելիքները պայմանավորված են նաեւ որոշմամբ, բայց կոնկրետ անելիքների մասով կարծում եմ՝ միասնական ճակատով պետք է որոշում ընդունել:

- Սամվել Կարապետյանի երեկվա հայտարարությունից ակնհայտ է, որ, անկախ ելքից, ընդդիմությունը վերցնելու է մանդատները, գնա խորհրդարան: Նա ասաց՝ եթե սկզբում հանրության 60 տոկոսն էր դեմ մանդատ վերցնելուն, հիմա 40-ն է, ի դեպ, այդ հաշվարկն ինչպե՞ս է արվել, եւ ինչի՞ արդյունքում է փոխվել հարաբերակցությունը:

- Այդ կարծիքների մասին, ըստ էության, հարցումներով է պարզվել: Բնականաբար, սկզբում քաղաքացիների մոտ սուր էմոցիոնալ դրսեւորումներ էին, բայց հետո սառը բանականությամբ, հավանաբար՝ քաղաքական, ինֆորմացիոն հոսքերի արդյունքում այլ կարծիքներ են ձեւավորվել: Ինչ վերաբերում է՝ այս հայտարարությունից ենթադրել, որ ընդդիմությունը վերցնելու է մանդատները, այնքան էլ ճիշտ չէ, պետք չէ ընտրությունների արդյունքները բերել-հանգեցնել միայն մանդատները վերցնել-չվերցնելու պայքարի: Միասնական ընդդիմությունը պետք է հասկանա քայլերի կարեւորությունը, դրանց նշանակությունը եւ ճանապարհային քարտեզ պետք է ունենա, թե ինչ է արվելու՝ վերցնելու եւ չվերցնելու դեպքերում: 2 դեպքում էլ՝ առանց փաստարկների, առանց առարկայական հիմքի, կլինի անպատասխանատու վերաբերմունք ընդդիմությանը քվե տված ՀՀ քաղաքացիների նկատմամբ:

- Ճանապարհային ի՞նչ քարտեզներ կգործեն 2 դեպքում, որ արդարացվի վերցնելը կամ չվերցնելը, ի դեպ, կա տեսակետ, որ եթե ընդդիմությունը չվերցնի մանդատները, իշխանությունը պարտադրված է լինելու արտահերթ ընտրությունների գնալ, ուստի չարժե կրկնել նախորդ խորհրդարանի չհաջողված փորձը, պետք է բոյկոտել:

- Մենք չպետք է առաջնորդվենք Նիկոլ Փաշինյանի կանխատեսելի օրակարգով, որովհետեւ Փաշինյանը երբեք չի անի այն, որից օգուտներ կքաղի ընդդիմությունը, հետեւաբար՝ Փաշինյանի օրակարգը պետք է թողնել իրեն: Ընդդիմությունը պետք է ունենա իր օրակարգը եւ գնա պատասխանատու եւ ոչ թե ականջահաճո լուծումների, որոնք կբխեն հասարակության փոքրամասնության պահանջներից: Ուստի ես զերծ կմնամ գնահատականներից, որովհետեւ պայքարի մեջ գտնվող մարդկանց համար պայքարի ճիշտ ընտրությունն է կարեւոր, ոչ թե դրա վերաբերյալ հասարակության այս կամ այն կողմի տված գնահատականը:

- Մանդատները վերցնելու դեպքում ի՞նչ գործողություններ են հնարավոր, որ այսպիսի իշխանության պարագայում դա արդարացված լինի:

- Չեմ կարող այս պահին հստակ ասել, բայց եթե վերցնում են մանդատները, հստակ դիրքորոշում ու քայլեր պետք է ունենալ՝ ինչ դիրքավորմամբ է ընդդիմությունը մտնում խորհրդարան՝ դրանից բխող հետեւանքներով: Նույնն էլ՝ երկրորդ տարբերակում: 2 դեպքում էլ ընդդիմությունը համարձակություն ու վճռականություն պիտի ունենա, ցանկացած լուծում լինելու է ցավոտ, որովհետեւ մի խումբ քաղաքացիների համար դա լինելու է ընդունելի, մյուս խմբի համար՝ ոչ:

- Դուք անձամբ ո՞ր տարբերակին եք կողմ:

- Անկեղծ ասած, սկզբում ես էլ էի էմոցիոնալ դաշտի ներքո, բայց այս պահին սպասում եմ, ամեն օր իրավական դաշտում երեւույթներ են փոխվում, մենք պետք է հասկանանք՝ եթե ունենք պայքարի երկու ուղղություն, ապա դրանցից որն է ավելի առարկայական... Ես այսօր թիմ եմ ներկայացնում, եւ այդ որոշումը կլինի թիմային, ուստի իմ անձնական կարծիքն այդքան էլ կարեւոր չէ:

- Համաձայն չե՞ք, որ մանդատները չվերցնելը կարող է քաղաքական ճգնաժամի հանգեցնել:

- Իրավական ամենաթողության պայմաններում դա հնարավոր չէ, ժողովրդավարության ամենափոքր ինդեքս ունեցող երկրներում հնարավոր կլիներ լեգիտիմության ճգնաժամ առաջացնել, բայց, հաշվի առնելով իրավական այն անարխիան, ամենաթողությունը, որ տեսնում ենք Հայաստանում, հնարավոր է ոչ մի հետեւանք չունենա, ինչպես եղավ Վրաստանում:

- Հետեւաբար, ճիշտը մանդատներ վերցնելն է:

- Ճիշտը միասնական որոշում կայացնելն է: Մենք սովոր ենք որոշումներ կայացնելու պատասխանատվությունը գցել ժողովրդի վրա, բայց կարծում եմ՝ ընդդիմությունը միասնական որոշում պետք է ընդունի եւ պատասխանատվությունն ինքը ստանձնի՝ եւ լավ, եւ վատ առումով:

- Ոմանց կարծիքով, այլընտրանքը փողոցային պայքար գեներացնելն է, ասում են՝ եթե ընտրություններով չստացվեց հեռացնել, պետք է փողոցով փորձել:

- Գեներացիան նշանակում է կուտակել, այսինքն՝ ժամանակի ընթացքում կուտակել, եթե այս պահին գուցե դեռ չի երեւում փողոցային պայքարի նախադրյալ, ժամանակի ընթացքում այն կերեւա:

- Իսկ մտահոգություն չունե՞ք, որ խորհրդարան գնալով կամրապնդեք ՔՊ-ի դիրքերը, իրենք մարդագողությամբ կարող են սահմանադրական մեծամասնություն ստանալ:

- Ցանկացած պայքար հղի է անկանխատեսելի հետեւանքներով, հետեւաբար՝ նախաառաջնորդվել, որ կարող է վատ բան լինել կամ չլինել, այնքան էլ ճիշտ չէ: Համարձակություն ու պատասխանատվություն է պետք դրսեւորել եւ հստակ քայլերով առաջ գնալ, չնայել, թե իշխանությունն ինչ կարող է անել, այլ հստակ գծել մեր անելիքները:

- Իսկ իշխանափոխության ի՞նչ գաղտնի պլանի մասին էր խոսում Սամվել Կարապետյանը, այդ պլանը պետք է իրագործվի խորհրդարանո՞ւմ, թե՞ դրանից դուրս:

- Քանի որ դեռեւս միասնական որոշում չկա, այդ պլանը կարող է արտահայտվել մանդատները թե՞ վերցնելու, թե՞ չվերցնելու դեպքում:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՎԵՐԻՆ ՈՍԿԵՊԱՐԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԵՆ. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ 14 ՄԻԼԻԱՐԴ ԵՆ ՀԱՏԿԱՑՐԵԼ

Այսիսի 30-ին Տավուշի մարզի սահմանամերձ Ոսկեպար գյուղում նախընտրական հանդիպման ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանը գյուղի հրապարակում հավաքված ոսկեպարցիներին ասաց, որ ամենակարեւոր գործերից մեկը համարում է սահմանազատման գործընթացն ավարտին հասցնելը, որպեսզի ոսկեպարցի երեխաների համար կիսատ գործ չթողնեն: Փաշինյանը Կիրանց գյուղի օրինակով ոսկեպարցիներին փորձում էր համոզել, որ սահմանազատման հետեւանքով Ադրբեջանի սահմանի մոտենալով անվտանգության ռիսկերը չեն մեծանում: Ասում էր՝ հիմա 21-րդ դարն է, կապ չունի՝ սահմանից 30 մետր ես հեռու, թե՝ 300 մետր, 30 կիլոմետր, թե՝ 300: Սահմանից 1000 կմ հեռու, տանը նստած կարող ես հեռուստացույց նայել, պատուհանից ԱԹՍ-ն ներս ընկնի: Այսպես նա ոսկեպարցիներին սովորեցնում էր, որ սահմանազատման շարունակության հետեւանքով, անկլավ համարվող Վերին Ոսկեպարի հանձնումով Ադրբեջանը կարող է իրենցից 30 մետր հեռավորությամբ հաստատվել, եւ դրա մեջ ոչ մի վատ բան չկա: Նա նաեւ հայտարարեց, թե պետական աջակցությամբ 21 միլիոն դրամ արժեքով, վարկային ֆինանսավորմամբ Ոսկեպարում կառուցված առանձնատներն Ադրբեջանի տարածքին ամենամոտ հատվածում են կառուցվել, եւ դրանով ոսկեպարցիներին զգուշորեն նախապատրաստում էր ադրբեջանցիներին իրենց դրկից՝ մոտ հարեւան տեսնելուն:

Սահմանազատումը շարունակվելու դեպքում Ադրբեջանին կհանձնվեն ոչ միայն Վերին Ոսկեպարի տարածքը, այլ նաեւ միջպետական ավտոճանապարհի Կիրանց-Ոսկեպար հատվածի որոշ կտորներ: Դրանից հետո Տավուշի մարզկենտրոն Իջեւանի տրանսպորտային կապը Նոյեմբերյան համայնքի հետ կդժվարանա: Իջեւան-Նոյեմբերյան ճանապարհի այլընտրանքային ճանապարհը Ենոքավան-Կարմիրգյուղ-Ջուջեւան ավտոճանապարհն է, որի 6,3 կիլոմետրանոց հատվածը կառուցվել է 2024 թվականին, ճանապարհի մնացած՝ մեծ հատվածը պետք է դեռ կառուցապատվի: Տեղեկություններ ենք ստացել, որ ավելի քան երկու ամիս է, ինչ չափագրողներ են աշխատում՝ այդ ճանապարհը կառուցապատելու համար:

Հունիսի 22-ին տեղեկատվական հարցում եմ ուղարկել տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին. «Ենոքավան-Կարմիր գյուղ ճանապարհի ընդամենը 6,3 կմ-ն է կառուցվել 2024 թվականին: Այդ ճանապարհի մնացած հատվածի չափագրման, նախագծման, նախահաշվի կազմման աշխատանքները ե՞րբ են սկսվել, ինչքա՞ն կտեւեն: Ե՞րբ է այդ ճանապարհի մնացած հատվածի շինարարության մրցույթ հայտարարվելու, ինչքա՞ն գումար է նախատեսված դրա շինարարության համար»:

Հունիսի 29-ին ստացել եմ ՏԿԵ նախարարի տեղակալ Ավետիք Դարբինյանի ստորագրությամբ պատասխանը. «Հայտնում ենք, որ Հ26, /Մ4/-Ենոքավան-Կարմիրգյուղ(գյուղատեղի)-/Մ16/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 6+300-կմ 71+800 հատվածի հիմանորոգման նախագիծը պատրաստ է: Շինարարության մրցույթը կայացել է: Մոտ 67 կմ ավտոճանապարհի հիմանորոգման աշխատանքները մեկնարկել են: Շինաշխատանքների պայմանագրային արժեքը 14 670 000 000 դրամ է»:

Ամեն փոքր գործից քարոզչական մեծ աղմուկ բարձրացնող իշխանությունը 67 կիլոմետր երկարությամբ, 14 միլիարդ 670 միլիոն դրամ արժեքով ավտոճանապարհի հիմանորոգման աշխատանքների մասին հանրությանը չի տեղեկացրել: Դրա պատճառն այն է, որ հանրությունը, իմանալով Իջեւան-Նոյեմբերյան ճանապարհին այլընտրանք հանդիսացող Ենոքավան-Կարմիրգյուղ-Ջուջեւան ավտոճանապարհի հիմանորոգման մասին, կանհանգստանա, որ առաջիկայում սահմանազատման շարունակմամբ Ադրբեջանին են հանձնվելու ադրբեջանական անկլավ հռչակված Վերին Ոսկեպարը, Կիրանց-Ոսկեպար ճանապարհի շատ հատվածներ: Այս տարածքում ապրող մարդիկ շատ լավ գիտեն, որ այդ հանձնումը Հայաստանի համար մեծ վտանգներ է պարունակում, որին առաջիկայում ավելի մանրամասն կանդրադառնանք:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԴԻԶՎԱՌԵԼԻՔ

ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ՀԱՐՑՆԵՔ, ԿԱՍԻ՝ ՄԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ ՄԵԶ ՎԱՌԵԼԻՔ ԿՏԱ

Ռուսաստանում վառելիքի ճգնաժամ է: Պատճառն ուկրաինական անօդաչուների հարձակումներն են նավթավերամշակող օբյեկտների վրա, ինչը երկրով մեկ բենզինի դեֆիցիտ է առաջացրել: ՌԴ 26 ռեգիոնում արդեն վառելիքի վաճառքի սահմանափակումներ են մտցրել: Դիզվառելիքի հետ կապված իրավիճակը փոքր-ինչ բարվոք է, սակայն այն օրեցօր թանկանում է: Վերջին շաբաթվա ընթացքում դիզվառելիքի գինը Ռուսաստանում աճել է 2,7 տոկոսով, ապրիլից՝ 42 տոկոսով, փետրվարի համեմատ՝ կրկնակի: Ռուսական գյուղմթերքի գներն են բավականին բարձրացել:

Հունիսի 28-ին ՌԴ նախագահը հայտարարել է, որ սպառողի պաշտպանության համար Ռուսաստանը մտցրել է բենզինի եւ ավիակերոսինի արտահանման լիակատար արգելք, իսկ դիզելային վառելիքի արտահանման ամբողջական արգելք սահմանելու հնարավորությունը քննարկվում է:

Հայաստանի համար արգելքը վաղուց է գործում, թեեւ մինչ օրս այն չէր տարածվում ԵԱՏՄ երկրների վրա: Ըստ ՌԴ կառավարության որոշումների, արտահանման արգելքներ են դրված միայն բենզինի եւ ավիակերոսինի վրա: Դիզվառելիքի վերաբերյալ ՌԴ կառավարությունը դեռեւս որոշում չունի: Սակայն ավիակերոսինի եւ բենզինի դեպքում էլ արտահանման արգելքը չի տարածվում միջկառավարական պայմանագրերով նախատեսված մատակարարումների վրա, այսինքն՝ ԵԱՏՄ երկրների:

Ինչեւէ, Հայաստան դիզվառելիքի մուտքը թեեւ ամբողջությամբ չի փակվել, բայց կրճատվել է: Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ գործող էներգետիկ հաշվեկշռով տարեկան նախատեսված է 175 000 տոննա անմաքս դիզվառելիք, որը եթե բաժանում ենք 12 ամսվա, ստանում ենք ամսական մոտ 14 500 տոննա ռուսական դիզվառելիք: Մինչդեռ այսօր փաստացի Հայաստան է հասնում ամսական ընդամենը 4-5 հազար տոննա:

Եթե արգելքը դեռեւս չի տարածվում ԵԱՏՄ երկրների վրա, ապա ինչո՞ւ է Հայաստանի համար բացառություն արվում, ինչո՞ւ են ՌԴ-ից ներկրվող դիզվառելիքի ծավալները շեշտակի նվազել եւ դարձել անկանոն: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում այս հարցի պատասխանը չունեն, բայց որպես հարցի լուծում՝ այլընտրանքային երկիր են գտել՝ Ադրբեջանը: Նախարար Գեւորգ Պապոյանը հունիսի 29-ին լրագրողներին ասել է, որ դիզվառելիքի դեֆիցիտ Հայաստանում չկա՝ մենք դիվերսիֆիկացրել ենք մեր ներմուծման շղթան: «Երբ իրանական ճգնաժամն առաջացավ, եւ աշխարհում բենզինի գները կրկնապատկվեցին, Հայաստանում աճն ընդամենը 5-10% էր, որովհետեւ սկսել էինք ներմուծել մի երկրից, որից մինչ այդ չէինք ներմուծում»,- ասաց նա՝ հաստատապես նկատի ունենալով Ադրբեջանը:

Թե ինչ կատաստրոֆիկ հետեւանքներ է ունենալու ռուսական դիզվառելիքի ծավալների կրճատումը մեր գյուղատնտեսության վրա, որն առանց այն էլ հազիվ է շնչում, պատկերացնել կարելի է: «Ֆերմերային շարժում» հասարակական կազմակերպության նախագահ **Սարգիս Սեդրակյանը**, որը գյուղմեքենաների մասնագետ է, պատմում է, որ վերջերս գնացել է Վրաստան եւ դաշտերում աջուձախ բազմազան նոր գյուղտեխնիկա է տեսել ու հիացել: Պատմում է. «Եվրամիությունը ծրագրեր է արել ու լիքը գյուղտեխնիկա է տվել Վրաստանին, գնացեք մեր դաշտեր՝ սովետական հնամաշ տեխնիկան է հիմնականում: Էն հին կոմբայնը, որ էն կողմից գալիս է, ես վախենում եմ, մտածում եմ՝ հիմա կքանդվի, կպոկվի, ինքս լինելով գյուղմեքենաների մասնագետ: Բայց հիմա եթե դիզվառելիքը չլինի, էս խղճուկ, հին գյուղմեքենաները, որոնք չունեն մանեւրականություն, դրանք էլ են կանգնելու»:

Նա մանրամասն ներկայացնում է հողագործության փուլերը: «Դաշտը վարում են: Ջերմոցը չեմ ասում, փոքր բաները, մեծ, հսկայական հողատարածքները, օրինակ, հացահատիկի, կերային կուլտուրաների, կարտոֆիլի տակ, սկզբում վարում են, դրա համար տրակտոր է պետք, տրակտորից էլ գութանն են կախում ու վարում: Դրանից հետո հողը լրացուցիչ փխրեցնում, շուռ են տալիս, այսինքն՝ լրացուցիչ մշակում են: Եթե վարի խորությունը 25-35 սմ է, ուրեմն 8-14 սմ խորությամբ այդ գործողություններն արվում են, կուլտիվատոր է պետք, երեսվարիչ, ցաքան, տարբեր տեսակի մեքենաներ: Դրանք էլի կցում են տրակտորին: Հետո ցանք են անում, շարքացանն են կցում տրակտորին, գնում է: Տրակտորը պետք է աշխատի, դրանից հետո կոմբայնը նույնպես դիզվառելիքով պետք է աշխատի: Որ չլինի, այս ամենը կկանգնի»:

Իսկ ինչ ենք անելու: Սեդրակյանը հարցին հարցով է պատասխանում. «Որ գազը թանկացավ, ինչ ենք անելու: Ես էս ժողովրդին չեմ հասկանում: Ռուսաստանը, եթե ինձ հարցնեք, աղքատ, կոռումպացված, բռնապետական երկիր է, բայց էդ մասին թող մտածեն ռուսները: Սրա կողքին ես համարում եմ, որ Հայաստանի համար նա կարող է լինել անվտանգության երաշխավոր»: Հիմա եթե Ռուսաստանը չի թողնում, որ էլ դիզվառելիք բերենք, ինչ ենք անելու: «Փաշինյանին հարցրեք, կասի՝ մեր անվտանգության երաշխավորը մեզ կտա վառելիք, այդպես կպատասխանի»: Էկոնոմիկայի նախարարն ասում է, որ մենք ուրիշ երկրից ենք բերում վառելիքը: «Իսկ այդ ուրիշ երկիրն Ադրբեջանն է, որը հանդիսանում է մեր անվտանգության երաշխավորը: Ասում եմ, չէ՞, աբսուրդի գագաթնակետը»:

Տնտեսագետ **Թաթուլ Մանասերյանը**, կանխատեսելով դիզվառելիքի դեֆիցիտի աղետալի հետեւանքները գյուղատնտեսության վրա, հարց է բարձրացնում՝ ինչո՞ւ Հայաստանը ռազմավարական նշանակության ապրանքների պահեստարաններ չունի: «Սա շատ նման է այն իրավիճակին, որ դեկտեմբեր, հունվար, փետրվար ամիսներին ասում են՝ անսպասելի ձյուն եկավ, բա ո՞նց անենք: Նման ճգնաժամային իրավիճակները միանգամից չեն հասունանում, եւ դրանց պետք է պատրաստվել, բայց, որքան ինձ հայտնի է, պետական պահեստարանները չեն ավելացվել: Նույնը վերաբերում է եւ հեղուկ գազին, եւ դիզվառելիքին, եւ ցորենի պաշարների կուտակմանը: Մեր իրավիճակում գտնվող պետությունը չպետք է հույսը դնի կայուն զարգացման վրա, որ ամեն ինչ հարթ կընթանա: Այս խնդիրը պետք է դրվի ու գոնե աստիճանաբար լուծվի, եւ սա նույնն է, որ մենք պետական բյուջեում ամեն տարի տարբեր ծախսեր ենք դնում, բայց կապիտալ ծախսերի վրա ուշադրություն չենք դարձնում, իսկ առանց դրանց լավ գիտեք, որ հեռանկարային զարգացում չի լինելու»: Ի՞նչ կլինի, եթե Պուտինը եւ ՌԴ նախարարները փակեն դիզվառելիքի մուտքը նաեւ ԵԱՏՄ երկրներ, մեզ մոտ ի՞նչ է լինելու՝ բերքը մնալու է դաշտերո՞ւմ:

«Խնդիրն արդեն ոչ թե պետության վերաբերմունքն է, որն այլեւս տրամաբանության մեջ չի տեղավորվում, այլ բոլորիս հանդուրժողականությունն է, ես այդ հանդուրժողականության վրա եմ զարմանում: Հարկատուների պահանջկոտությունը պետք է ավելի բարձր մակարդակի լինի, ոչ թե ժամանակ առ ժամանակ սպասենք, որ գյուղացուն էսինչ կամ էնինչ հարցով սուբսիդավորում կլինի՞, թե՞ չէ, առանձին ծրագիր կլինի՞, թե՞ չէ»,- պատասխանում է տնտեսագետը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՆՈՐ ՇՈՒԿԱ ՄՏՆԵԼԸ ԴՅՈՒՐԻՆ ԳՈՐԾ ՉԷ, ԿԱՐՈՂ Է ՏԱՐԻՆԵՐ ՏԵՎԵԼ

Հայկական ալկոհոլային խմիչքների՝ Ռուսաստան արտահանման շուրջ ամիսներ առաջ սահմանված սահմանափակումները շարունակում են ազդեցություն ունենալ ոլորտի վրա՝ լուրջ խնդիրներ ստեղծելով արտահանողների համար: Կառավարությունն ընկերությունների համար աջակցության ծրագրեր է նախատեսում՝ հայտարարում է, որ կսուբսիդավորի արտահանված ապրանքները, սակայն արտահանման նոր շուկա գտնելու հարցում արտադրողը ռեալ աջակցություն չի ստանում:

«Հրապարակի» հետ զրույցում ՄԱՊ ընկերության տնօրեն **Մակար Պետրոսյանը** հայտնեց, որ այս պահին իրենց ընկերությունը դեպի Ռուսաստան կարողանում է գինի եւ կոնյակ արտահանել: «Մենք խոչընդոտ չունենք, կան որոշ ընկերություններ, որոնք ունեն նման խնդիրներ, այսինքն՝ խնդիրը ոլորտային չէ: Նախորդ տարի մենք Վրաստանի հետ կապված խնդիր ունեինք, որ վրացական կողմն անտեղի կանգնեցնում էր, ստուգումներ իրականացնում, հետո Լարսի հետ կապված խնդիրներ կային, սակայն դրանք մանիպուլյատիվ խնդիրներ էին եւ ոլորտի հետ կապված չէին, այսինքն՝ մեր դեպքում քաղաքական կոմպոնենտ չկար եւ հիմա էլ չկա մեր ընկերության գինու եւ կոնյակի մասով»:

Պետրոսյանը նշեց, որ պետական բոլոր ծրագրերից օգտվում են. «Ես եկել էի էկոնոմիկայի նախարարություն՝ աջակցման ծրագիր ունեն, եկել էի դրա մասով ծանոթանալու: Մեր գործառույթներով մենք համապատասխանում ենք պետական աջակցության բոլոր ծրագրերին, ինչ ծրագիր կա՝ ոլորտին պետք եկող, մենք շահառու ենք: Հիմա նոր ծրագիր ունի պետությունը, որ ամեն արտահանում սուբսիդավորում է: Ծրագիրը մեկ ամսով էր՝ հունիսին էր վերաբերում եւ ավարտվում էր արդեն: Այսինքն, հունիսին որքան արտահանում իրականացնում ես, հաշվետվություն ես տալիս նախարարություն եւ ստանում ես համապատասխան չափով աջակցություն: Սա նաեւ Ռուսաստան արտահանմանն է վերաբերում»:

Նրա խոսքով, նոր շուկաների փնտրտուքը միշտ եղել է ու կա. «Էնպես չէ, որ մեզ հորդորում են, նոր մենք նոր շուկաներ ենք փնտրում, բայց նոր շուկա մուտք գործելը դյուրին գործ չէ, կարող է տարիներ տեւել՝ մինչեւ առաջին պայմանագիրը, դրանից հետո տարիներ տեւի այդ պայմանագիրը մեծացնելը, ընդլայնելն ու զարգացնելը եւ տեսականիով, եւ քանակով: Այսինքն, դա անվերջ պրոցես է, բայց պետության վերջին ծրագիրը եթե լինի երկարաժամկետ, թույլ կտա մեզ, որ մենք էլ մեր հերթին ավելի ճկուն գնային քաղաքականություն վարենք մեր ապագա գործընկերների հետ: Հիմա ծրագիրը 1 ամսով է, պատկերացրեք՝ 1 ամսով օժանդակություն կա, մինչեւ դու զանգես մեկին, ամիսը, կոպիտ ասած, վերջանում է, այսինքն՝ դու չես էլ հասցնում ինչ-որ բան անել, բայց եթե գիտես, որ մոտակա վեց ամիսը կամ մի տարին նման ծրագիր կա, որից կարող ես օգտվել, սկսում ես դրան համապատասխան քո առաջարկները ձեւավորել նոր շուկաներում: Իմ տեղեկություններով, ուզում են այս ծրագիրը եւս մեկ ամսով երկարացնել, բայց դեռ չի երկարացվել»:

Հարցին, թե այս տարի խաղողի մթերում իրականացնելո՞ւ են, Պետրոսյանը պատասխանեց. «Ինձ թվում է՝ ես նույն ծավալս կկարողանամ պահպանել, ինչ ծավալով որ մթերել եմ նախկինում, իհարկե, մի քիչ վաղ է այդ մասին խոսելը, բայց կարծում եմ, որ 10-15 տոկոսի չափով ավել կամ պակաս, բայց մթերում կիրականացնենք: Տարեկան 18-27 հազար տոննա խաղող ենք մթերել տարբեր տարիներին եւ մթերում իրականացնում ենք անմիջապես գյուղացուց՝ առանց միջնորդ կազմակերպությունների»:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԱՐՏԱՀԱՅՈՒՄ

ՄԵՐ ԻՇԽԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՉԻ ՀԱՍՆՈՒՄ, ՇԱՀՈՒՄ Է ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆԸ

Կարող է մի մարդ՝ հանուն իշխանության եւ հանուն աշխատանքը չկորցնելու, սպառնալիք դառնալ հազարավոր մարդկանց աշխատանքի եւ բնականոն գործունեության համար: Մեր աչքի առաջ հենց այդպիսի տեսարան է: Փաշինյանի՝ սեփական աթոռը պահելու քաղաքականության արդյունքում անորոշության են մատնվել հարյուրավոր ձկնաբուծական տնտեսություններ, դրանց հազարավոր աշխատակիցներ ու ընտանիքների անդամներ: Արդեն մեկ ամիս է՝ հունիսի 2-ից, Ռուսաստանը փակել է իր շուկան, արգելել հայ ձկնաբույծների արտադրանքի ներմուծումը ՌԴ: Մարդիկ չգիտեն, թե ինչ է լինելու իրենց հետ, ում դիմեն կամ ինչ սպասեն:

Մենք խոսեցինք ձկնաբուծական տնտեսություն ունեցողներից մեկի հետ, որը ներկայացրեց իրենց ոլորտում ստեղծված վիճակը: «Հունիսի 2-ին Վերին Լարսի անցակետում գտնվող իմ ապրանքը չեն թողել մտնի Ռուսաստան, մեքենան հետ է վերադարձել, 20 տոննայից ավել ձուկը դրել եմ սառնարան, սպասում եմ, չգիտեմ, թե դրա հետ ինչ եմ անելու: Բայց դա հարցի ամենափոքր մասն է. ջրավազաններում հարյուրավոր տոննա ձուկ կա, ես չգիտեմ, թե այդ ապրանքը ոնց պետք է իրացվի: Հենց հիմա կերի խնդիր կա, ամեն օր հարյուրավոր կիլոգրամ կեր ենք օգտագործում, սա ջերմոց չէ, որ պոմիդորը կամ վարունգը սպառում չունենա՝ թողնես քոլի վրա ու ծախս չանես, մեր տնտեսություններն ամեն օր հազարավոր դոլարների ծախս են ուզում: Կեր վաճառողները, որ նախկինում ապառիկով կեր էին տալիս, գիտեին, որ այսօր կտան, 10 օր հետո փողը Ռուսաստանից կստանամ՝ կվճարեմ, հիմա չեն տալիս, որովհետեւ ահագին պարտք է կուտակվել: Իրենք էլ փողի խնդիր ունեն, որ նորից կեր պատվիրեն, վաղը կարող է նույնիսկ կերի խնդիր առաջանալ: Գումարած՝ մեր տնտեսությունները մեծ քանակով էլեկտրաէներգիա են օգտագործում, ամսական ծախսը 5-20 միլիոն դրամ է՝ կախված տնտեսության չափից, եթե չվճարենք, ինչ է լինելու, հոսանքազրկելու են, ու ձկները սատկեն, թե ինչ-որ լուծում են տալու: Գումարած՝ վարկերի մարման հարցը. ցանկացած գործարար ընդլայնում է իր բիզնեսը, տեսում ես, որ եկամուտ կա՝ մեծացնում ես տնտեսությունը, նոր ջրավազաններ ես կառուցում, ավելի շատ մանրաձուկ ես առնում, ավելի շատ սարքավորումներ: Հիմա վաճառք չկա, եկամուտ չկա, իսկ վարկը, տոկոսը կա, բանկին չի հետաքրքրում՝ դու վաճառք ունես, թե չունես»:

Հարցնում եմ՝ արդյոք պետական մարմիններին դիմել են, խնդիրը ներկայացրել են: «Մեր ձկնաբույծների միությունը դիմել է, էկոնոմիկայի նախարարության հետ քննարկում եղել է, ասել են, որ իրենք էլ են քննարկում, տեսնեն, թե ինչ կարող են անել, ինչով կարող են օգնել, բայց այս պահի դրությամբ որեւէ քայլ չի արվել»: Մինչեւ Ռուսաստանի կողմից ներմուծման սահմանափակումը, ձկան մեծածախ վաճառքի դեպքում 1 կիլոգրամն արժեցել է 2 հազար 500 դրամ, այդ գնով վաճառվել է նաեւ տեղական շուկայում, իսկ վերավաճառողներն արդեն ձուկը վաճառել են 3200-4000 դրամով, հիմա մեծածախի գինն իջել է մինչեւ 1500-1600 դրամ: Ըստ մեր զրուցակցի, դա ձկան ինքնարժեքն է, դրանից պակաս վաճառելու դեպքում տնտեսությունը կորուստներ է կրում, դրա համար մարդիկ դրանից ներքեւ չեն իջեցնում. «Հասկանում ենք, որ բոլորն էլ փողի խնդիր ունեն, բայց եթե հանուն փողի ավելի ցածր վաճառենք, ոչ միայն ուրիշներին ենք վնասելու, այլեւ մենք մեզ ենք կործանելու»:

Ամենակարեւոր եւ այս օրերին ամենաշատ տրվող հարցը. իսկ ինչո՞ւ չեն արտահանում եվրոպական շուկա, կամ՝ աշխարհում 7 միլիարդանոց շուկա կա, փոքրիկ, ընդամենը 150 միլիոնանոց ռուսական շուկան է Փաշինյանը փակել, դրա փոխարեն բացվել է համաշխարհային 7 միլիարդանոց շուկան, կարո՞ղ է իրենց արտադրանքը չի համապատասխանում միջազգային չափանիշներին, թե՞ իրենք այնքան անորակ ապրանք են արտադրում, որ միայն Ռուսաստան կարող են արտահանել: Մեր զրուցակիցը ծիծաղում է. «Երեք տարի է՝ այդ ուղղությամբ աշխատում ենք, խոսքը միայն իմ մասին չէ, տարբեր տնտեսություններ իրենց արտադրանքի փորձանմուշներ են ուղարկել տարբեր երկրներ, նաեւ՝ եվրոպական, տարբեր երկրների լաբորատորիաներ: Արդյունքները նորմալ են եղել, ոչ մի խնդիր չեն տեսել, բայց ապրանքը չեն ուզում գնել: Մեր արտադրանքի որակի հետ կապված՝ Եվրոպայում խնդիր չի կարող լինել, եւ գիտե՞ք, թե ինչու. որովհետեւ կերը մենք գնում ենք եվրոպական երկրներից, եվրոպական չափանիշներով արտադրված, մեր ջուրն էլ այնքան մաքուր եւ որակով է, որ համապատասխանում է խմելու ջուր լինելու չափանիշներին, ինչո՞ւ պետք է այդ մաքուր ջրում եւ եվրոպական կերով արտադրված ձուկը խնդիր ունենա: Բայց իրենք մեր ապրանքը չեն ուզում, իրենց կերը մեզ ծախում են, բայց մեր ձուկը չեն ուզում առնել»:

Մեր զրուցակիցը ցույց է տալիս իր տնտեսության դիմաց գտնվող հայ-թուրքական սահմանը եւ ասում է. «Տես՝ մի քանի կիլոմետր այն կողմ Թուրքիան է, այնտեղ էլ են ձկնաբուծարաններ կառուցել, մեզնից են սովորել, տեսել են, որ մենք աշխատում ենք, եկամուտ կա, իրենք էլ են սարքել, մենք ու իրենք նույն ջուրն ենք օգտագործում, նույն ստորերկրյա ավազանից ենք օգտվում: Իրենք էլ են իրենց աճեցրած ձուկը Ռուսաստան արտահանում, Ռուսաստանում վաճառում են որպես «հայկական ձուկ, հայկական իշխան», որովհետեւ մենք սպառողին համով ու որակով ապրանք էինք մատակարարում: Հիմա մենք չենք կարողանում մեր ապրանքն արտահանել, պատկերացնո՞ւմ ես՝ իրենց համար ինչ հնարավորություն է բացվել»:

Իմ զրուցակիցը քվեարկել է Նիկոլ Փաշինյանի ՔՊ-ի օգտին, դրա համար ամաչում է ասել իր անուն-ազգանունը, ամաչում է, որ մարդիկ կճանաչեն եւ կասեն, թե դու ինչու ես բողոքում, քո ընտրած իշխանությունն է, դու էիր մարդկանց համոզում՝ քվեարկել այդ կուսակցության օգտին: Երբ հունիսի 2-ին իր ձուկը հետ է եկել Հայաստան, իրեն վստահեցրել են, որ շատ կարճ ժամկետում այդ հարցը տեղը կընկնի, հիմա էլ են ասում, ինքն այն ժամանակ հավատացել է, վստահեցնում է, որ հիմա էլ է հավատում: ՔՊ-ականների հավատը «փրկչի» նկատմամբ անսասան է:

Իրականում, մարդկանց մի մասի մոտ վախը մթագնել է բանականությունը, նրանք այնքան են վախեցած իշխանությունից, որ առաջնորդվում են բացառապես վախով, եւ սա է իշխանության հիմնական զենքը:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԱՊՕՐԻՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊՕՐԻՆԻ ՊԱՀԱՊԱ՞ՆԸ

ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը սկզբում հայտարարում էր, որ ընդդիմադիր եռյակին ընտրած քաղաքացիներին 100 տոկոսով ընտրակաշառք է բաժանվել: Իհարկե, դա սուտ էր, ավելի ճիշտ՝ զրպարտություն: Բայց քանի որ նա, պաշտոնի բերումով, օժտված է «ժողբաստիոնային» անձեռնմխելիությամբ, նրա նկատմամբ, բնականաբար, քրեական վարույթ չհարուցվեց: Այնուհետեւ, երբ բազմաթիվ ընդդիմադիրներ, այդ թվում տողերիս հեղինակը հայտարարեցինք, որ կաշառք չենք վերցրել, 100 տոկոսը վերածվեց 70 տոկոսի: «Ուժեղ Հայաստան», «Հայաստան» դաշինքներին ու ԲՀԿ-ին ընտրել է կես միլիոնից ավելի քաղաքացի՝ 543 հազար 276 մարդ, այսինքն, 380 հազար 293-ը (70 տոկոսը) պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի: Բայց քանի որ նման բան տեղի չունեցավ, դա նշանակում է, որ 70 տոկոսի մասին խոսքը եւս զրպարտություն էր, ինչի համար հետագայում զրպարտության հեղինակը պետք է պատասխանատվության ենթարկվի:

Բայց դա էլ ոչինչ. կա մեկ այլ հանգամանք, որն արժանի է հիշատակման: ՀՀ արդարադատության նախարար Գալյանը նախօրեին ՍԴ-ում հայտարարել է, որ իրենք ընտրակաշառքների առումով «Դեմոկրատիա, օրենք, կարգապահություն» (Վ. Ղուկասյանի (Դոգի) ուժը) ու «Հանուն հանրապետության» (Ա. Բաբաջանյանինը) կուսակցությունների փաստարկների հետ համաձայն են՝ ընդունում են, որ դրանց ծավալները «բավականին մեծ են եղել», բայց «համաձայն չեն, որ դրանք հանգեցրել են ընտրության արդյունքների անվավերության»: Այսինքն, չի կարծում, թե դրանք կարող էին հանգեցնել ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելուն:

Ի՞նչ է ստացվում: Այն, որ ընտրակաշառքների ծավալները բավական մեծ են, բայց այնքան մեծ չէին, որ ընտրության արդյունքները հանգեցնեին անվավերության: Բայց եթե հաշվի առնենք, որ քվեարկության մասնակիցների 380 հազար 293-ը 1 մլն 476 հազար 769-ի 25.75 տոկոսն է, ապա նախարարի խոսքը կարծես հիմնավոր չէ: Որովհետեւ եթե քվեարկությանը մասնակցեր ոչ թե մեկուկես միլիոն, այլ, ասենք՝ 15 միլիոն ընտրող, ապա 380 հազար 293-ը կարելի էր համարել ոչ շատ մեծ: Իսկ 25.75 տոկոսը համարվում է էական եւ համակարգային ծավալ, եւ այն չէր կարող չհանգեցնել ընտրության արդյունքների անվավերության:

Որպեսզի կարծիքս հիմնավոր լինի, դիմեցի արհեստական բանականությանը (ԱԲ): «25 տոկոսանոց ընտրակաշառքային խախտումը կարո՞ղ էր հանգեցնել ընտրության արդյունքների անվավերության» հարցին ի պատասխան՝ ԱԲ-ն մեջբերել է տիկին Գալյանի ասածն այն առումով, որ պետք է ապացուցվի, որ այդ ծավալն ազդել է ընտրողների ազատ կամարտահայտման վրա եւ խանգարել է ընտրությունների իրական արդյունքների ձեւավմանը: Ինչպես նաեւ՝ ուղղակիորեն ազդել է մանդատների բաշխման կամ անցողիկ շեմը հաղթահարելու վրա: Կարծում եմ, որ այդ պայմաններն առկա են. առաջին պահանջը 60 հազար ընտրողի հարցն էր՝ ԲՀԿ-ի կողմից անցողիկ շեմը հաղթահարելու առումով: Երկրորդը ՔՊ-ի կողմից լրացուցիչ 3 մանդատ ստանալն էր, ինչն ապահովեց նրա 3/5-րդ ունենալը:

Կարծում եմ, տվյալ դեպքում ԱԲ-ն 100 տոկոսանոց ճշմարտություն է ասել՝ ի տարբերություն ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի հայտարարությունների: Մնում է, որ ՍԴ-ն հաշվի առնի այդ հանգամանքը, հայտարարի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին եւ նշանակի նոր ընտրություններ: Ինչ վերաբերում է ընտրակաշառք ստացողներին եւ բաժանողներին, ապա բաժանողների նկատմամբ բազմաթիվ քրեական վարույթներ են հարուցվել, որոնք, կարծում եմ, ավելի ուշ դատարաններում առոչինչ կդառնան: Իսկ ստացողների առումով ասեմ, որ պետության իրավական ողջ համակարգը «Ազատություն» ռադիոկայանի չափ չկար, որը 2017-ին ընտրակաշառքի մի քանի դեպք էր հայտնաբերել: Չէր էլ կարող լինել, քանի որ ընդդիմադիր քաղաքական ուժերը խելքները հացի հետ չէին կերել, որպեսզի տոտալ վերահսկողության պայմաններում փորձեին ընտրակաշառք բաժանել: Բայց այս պատմությունը կմնա որպես ամենամեծ աֆյորան (խարդախությունը), որ փորձեց իրականացնել իրեն ժողովրդավարական հորջորջած իշխանությունը:

Ինչեւէ, ՀՀ դատահիրավական համակարգին մնում է ընտրությունների լեգիտիմությունը պահպանելու նպատակով քրեական վարույթներ հարուցել 380 հազար 293 մարդու կամ քվեարկության մասնակիցների 25.75 տոկոսի նկատմամբ: Կամ այդքան մարդուն զրպարտելու համար քրեական վարույթ հարուցել ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի նկատմամբ: Կամ էլ նա ստիպված է լինելու հետագա ողջ ժամանակաշրջանում կրելու ապօրինի իշխանության ապօրինի պահապանի դրոշմը:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ԳՅՈՒՂ



5 ՏԱՐՈՒՄ ՄԻԱՅՆ ՄԵԿ ՄԱՐԶՈՒՄ ԳԼԽԱՔԱՆԱԿԸ ՆՎԱԶԵԼ Է 22 ՀԱԶԱՐ 266-ՈՎ

Էջը՝
Նելլի
ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

Վերջին տարիներին Հայաստանում անասնապահությունը լուրջ ճգնաժամ է ապրում: Ոլորտի անկումը պայմանավորված է մի շարք խնդիրներով՝ կաթի ցածր գին, կերի թանկացում, պետական աջակցության բացակայություն եւ այլն: Շիրակը միշտ եղել է հանրապետության անասնապահության գլխավոր կենտրոններից մեկը՝ ապահովելով մսի, կաթի եւ կաթնամթերքի արտադրության զգալի ծավալներ:

Հունիսի 23-ին էկոնոմիկայի նախարարությունը Շիրակի մարզում անասնաբուծության զարգացման փորձնական ծրագիր է դրել քննարկման, ըստ որի՝ անասնաբուծության խթանման համար կտրամադրվեն անհրաժեշտ մեկնարկային պայմաններ, որոնք առավելագույնս կնպաստեն մարզում անասնաբուծության ոլորտի զարգացմանը եւ ինտենսիվացմանը: Ծրագրի իրականացումը թույլ կտա Շիրակի մարզում ջրատար համակարգերով եւ կենդանիների ջրախմոցներով համալրված 10 հազար հա մակերեսով արոտավայրեր ունենալ, տավարի գլխաքանակն ավելացնել շուրջ 5 հազար, իսկ ոչխարինը՝ ավելի քան 15 հազարով, տարեկան արտադրել 13 հազար տոննա կաթ եւ ավելի քան 1100 տոննա բարձրորակ տավարի եւ ոչխարի միս, աջակցել 30 ժամանակակից տիպային անասնաշենքերի կառուցմանը, 300 գլուխ տոհմային երինջների ձեռքբերմանը, ինչպես նաեւ՝ հանրապետությունում հիմնել տոհմակայան եւ կազմակերպել արտադրող ցուլերի՝ տարեկան առնվազն 50 հազար չափաբաժին բարձրորակ սերմնահեղուկի տեղական արտադրություն: Կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել 581,3 մլն դրամ, որից 72 մլն դրամը՝ 2028-ին, 172,7 մլն-ն՝ 2029-ին, 257,4 մլն-ն՝ 2030-ին եւ 79,2 մլն-ն՝ 2031 թվականին:

Ի՞նչ կտա այս նախագիծը Շիրակի մարզին. հարցն ուղղեցինք «Հայաստան» խմբակցության պատգամավոր **Միեր Մելքոնյանին**: «Մինչ հարցին պատասխանելն ասեմ, որ Շիրակի մարզի անասնապահության ոլորտում այսօր կուտակված խնդիրներն այլեւս չեն կարող դիտարկվել որպես առանձին տնտեսվարողների կամ համայնքների ներքին մարտահրավերներ: Դրանք դարձել են պետական նշանակության հրատապ հարց, որի լուծումն անմիջականորեն առնչվում է մեր երկրի տնտեսական կայունությանը, գյուղական բնակավայրերի կենսունակությանը եւ, ամենակարեւորը՝ ՀՀ պարենային անվտանգությանը: Այսօր, երբ աշխարհում սննդային անվտանգության հարցը դարձել է ազգային անվտանգության կարեւորագույն բաղադրիչներից մեկը, Շիրակի մարզի անասնապահական խնդիրների լուծումը պահանջում է հրատապ, համակարգային եւ պետականամետ մոտեցում: Ոլորտի առողջացումն ու զարգացումն այլընտրանք չունեն, քանի որ խոսքը միայն գյուղատնտեսության մասին չէ. խոսքը մեր պետության ինքնաբավության, գյուղացու արժանապատիվ աշխատանքի եւ Հայաստանի ռազմավարական դիմակայունության մասին է: Այսօր հանրապետությունում մսի դեֆիցիտ կա, տավարի մսի 1 կգ-ն մինչեւ 6 հազար դրամ է վաճառվում: Ձեռքիս տակ ունեմ պաշտոնական թվեր, կոնկրետ Շիրակի մարզում 2020 թվականին հաշվառված է եղել 87 հազար 95 խոշոր եղջերավոր կենդանի, 2025թ. հունվարի 1-ի դրությամբ այդ թիվը նվազել է 22 հազար 266-ով: Արագածոտնի մարզում 2020 թ. հունվարին հաշվառված է եղել 68 հազար 215 խոշոր եղջերավոր կենդանի, 2025-ին՝ 53 հազար 411: Գրեթե բոլոր մարզերում խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը պակասել է: Եթե այս ծրագիրը չմնա թղթի վրա, այլ կյանքի կոչվի, վատ ծրագիր չէ: Բայց փորձը ցույց է տալիս, որ ներկայացված ծրագրերը շատ դեպքերում չեն իրականանում կամ էլ ոչ լիարժեք չափով են գործում, ինչպես եղավ սպանդանոցների ծրագիրը, որ մինչեւ հիմա մարզում սպանդանոց չի գործում: Ներկայացված ծրագրի մեջ շատ կարեւոր հանգամանք է, թե ովքեր են լինելու շահառուները: Եթե շահառուները լինեն գյուղացիները, ովքեր իսկապես այդպիսի ծրագրի կարիք ունեն, դա միանշանակ ողջունելի է, բայց շատ դեպքերում շահառու են դառնում ֆերմերային տնտեսությունները, որոնք այս կամ այն կերպ կապ ունեն գործող իշխանությունների հետ: Խնդիրը լավ ուսումնասիրելով, ինքս մի քանի կետ կարող եմ առաջարկել՝ օրենսդրորեն ամրագրել ոլորտի առաջնահերթ կարգավիճակը, ստեղծել առանձին պետական ծրագիր՝ «Անասնապահության վերականգնում՝ 2026-2035» հստակ թիրախներով, սահմանել նվազագույն ընդունելի գլխաքանակի շեմեր՝ ըստ մարզերի: Արտադրության ամբողջ շղթայի պետական կարգավորում՝ կեր, արտադրություն, մթերում, վերամշակում, իրացում: Պարտադիր, բայց սուբսիդավորվող ապահովագրություն՝ կենդանիների անկման, հիվանդությունների եւ կլիմայական ռիսկերի դեմ: Կերի արտադրության համար հատուկ սուբսիդիաներ եւ հարկային արտոնություններ: Հիվանդությունների կանխարգելման ազգային ծրագիր: Կարող եմ եւս մի քանի կետ նշել, եթե այսօր չձեւավորվի հստակ, համարձակ եւ երկարաժամկետ պետական քաղաքականություն, ապա Շիրակի մարզում անասնապահության անկումը կարող է դառնալ անդառնալի: Խնդիրը դարձել է սոցիալ-տնտեսական կայունության, տարածքային համաչափ զարգացման եւ ազգային անվտանգության հարց: Պետությունը պետք է դադարի արձագանքել միայն հետեւանքներին եւ սկսի կառավարել պատճառները: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի ոչ թե պարզապես պահպանել ոլորտը, այլ վերակենդանացնել Շիրակի անասնապահությունը՝ այն դարձնելով մրցունակ, արդյունավետ եւ Հայաստանի պարենային ինքնաբավության ամուր հենասյուն»:

ՎԵՐԵՎՆԵՐԸ ՏԵՂՅԱԿ ԵՆ, ՔԵԶ Ի՞ՆՉ Է ՊԵՏՔ, ՄԱՏԴ ԻՆՉ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՐԱ ԴՆԵՍ, ԽՆԴԻՐ ՉԵՍ ՈՒՆԵՆԱ

Գորիսի պետական բազմագործառութային քոլեջում կրքերը ոչ մի կերպ չեն հանդարտվում: Հիշեցնենք, որ դեռ 2025 թվականի սկզբին, երբ Գորիսի պետական քոլեջը եւ Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը միավորվեցին՝ դառնալով Գորիսի բազմագործառութային պետական քոլեջ, ուսանողներն ու դասախոսները դասադուլ-գործադուլ սկսեցին, որոշ աշխատակիցներ ազատվեցին աշխատանքից: Անցել է մեկ տարուց ավելի, սակայն Գորիսի քոլեջի շուրջ աղմուկը դեռ շարունակվում է:

ԿԳՄՍ նախարարը, կոլեկտիվների պայքարն անտեսելով, իր սրտի թեկնածու Արմինե Կոլյանին տնօրեն կարգեց, որից հետո մի շարք աշխատակիցներ ազատման դիմումներ գրեցին: Ինքը՝ նորանշանակ տնօրենն էլ է սկսել որոշ աշխատակիցների ազատել, ոմանց էլ պարտադրում են դիմումներ գրել: Մեզ պատմեցին, որ նա աշխատանքից ազատել է քոլեջի հաշվապահին, ըստ լուրերի՝ նա չի համաձայնել բողոք գրել նախկին տնօրեն Կարեն Լազարյանի դեմ: Եվ հաշվապահը միակ ազատվողը չէ:

Ինչո՞ւ են աշխատակիցներն ազատման դիմումներ գրել՝ հարց ուղղեցինք քոլեջի տնօրեն **Արմինե Կոլյանին**: «Չգիտեմ, չեմ կարող ասել, մենք 6 ամիս իրար հետ շատ լավ աշխատել ենք, համատեղ միջոցառումներ ենք կազմակերպել, որեւէ խնդիր մեր մեջ չի եղել, ես հարցրել եմ՝ իրենք չեն ասել: Անգամ ասել եմ՝ ես ձեզ հնարավորություն եմ տալիս՝ հետ գալու, մնացեք: Ես որեւէ խնդիր չեմ ունեցել իրենց հետ: Դիմում են գրել, բայց դեռ չեն ազատվել»:

- Բայց եթե, ինչպես Դուք եք ասում, համերաշխ աշխատել եք, ինչո՞ւ են աշխատակիցները դիմում գրել, Ձեր կողմից ճնշումնե՞ր են եղել աշխատակիցների նկատմամբ:

- Մենք հաշվապահի հետ ունեցանք խնդիր, որը Ձեզ առայժմ ասելու իրավասություն չունեմ ու ենթադրում եմ, որ հաշվապահի մոտիկներն են դրանից որոշել՝ ազատման դիմում գրել:

- Իսկ ի՞նչ խնդիր ունեք հաշվապահի հետ:

- Հաշվապահի հետ ունենք անվստահության հիմք, փակագծեր բացել չեմ կարող, սպասեք՝ կիմանաք:

- Մեզ ասացին, որ հաշվապահին ստիպել եք նախկին տնօրենի դեմ բողոք գրել, ինչն էլ ազատման պատճառ է եղել:

- Բացարձակ ճնշում չի եղել, նման բան չկա, մենք մինչեւ վերջ բարիդրացիական, ընկերական հարաբերությունների մեջ ենք եղել: Այնպես էր իրավիճակը, որքան էլ որ ես հարգեմ, սիրեմ հաշվապահին, քոլեջն իմ սեփական բիզնեսը չէ, ես՝ որպես գործադիր մարմնի ղեկավար, չեմ կարող աչք փակել: Բացահայտվել է մի բան, որից հետո ես դիմել եմ ոստիկանություն, ես հաղորդում եմ տվել, մնացածից տեղյակ չեմ:

- Խոսքը գումարների վատնման մասին է, հաշվապահն է յուրացրել գումարները:

- Ես չգիտեմ, համապատասխան մարդիկ կպարզեն:

- Եթե չգիտեք, ապա ի՞նչ հաղորդում եք ներկայացրել:

- Լավ, ուրեմն անվստահությունն արդեն իսկ կա:

Զրուցեցինք նաեւ Գորիսի պետական քոլեջի նախկին տնօրեն **Կարեն Լազարյանի** հետ, որը ներկայացրեց քոլեջի աշխատակիցների ազատման պատճառները. «Ինձ ապօրինի կերպով աշխատանքից ազատելուց եւ քոլեջի անվանափոխումից հետո ականատես եմ լինում մի իրավիճակի, երբ արդեն շուրջ 6 ամիս հաստատությունը ղեկավարող նոր տնօրենի՝ Արմինե Կոլյանի գործողություններն անցել են օրինականության եւ բարոյականության բոլոր սահմանները: Նոր տնօրենը տեւական ժամանակ է, ինչ բացահայտ ճնշումներ ու շանտաժ է գործադրում քոլեջի հաշվապահի նկատմամբ՝ ստիպելով եւ պահանջելով նրանից, որ իմ դեմ ներկայացնի կեղծ բողոքներ ու շինծու հայտարարություններ, որոնց նպատակն ինձ իրավական պատասխանատվության ենթարկելն է (քրեականացնելը): Ավելին՝ իր ապօրինի պահանջները պարտադրելու ընթացքում տնօրեն Արմինե Կոլյանը բացահայտ հայտարարել է. «Վերեւները տեղյակ են, քեզ ի՞նչ է պետք, մատդ ինչ աշխատանքի վրա դնես, խնդիր չես ունենա»՝ այդպիսով ակնարկելով բարձրաստիճան հովանավորչության մասին: Հաշվապահին անգամ ձայնային հաղորդագրություն են ուղարկել, հիմնավոր կասկած կա, որ այդ ձայնային հաղորդագրությունն իրեն է ուղարկել Սյունիքի փոխմարզպետ Նարե Ղազարյանը: Հաշվապահը, հրաժարվելով գնալ նման ստոր քայլի, կեղծիքի եւ տեղի տալ Սյունիքի փոխմարզպետի կողմից ենթադրյալ ուղղորդվող ճնշումներին ու շանտաժին, տնօրենի կողմից ենթարկվել է սպառնալիքների: Կոլյան Արմինեն հայտարարել է. «Եթե Կարեն Լազարյանի մասին բողոքներ չես ներկայացնում, ուրեմն դո՛ւ ես պատժվելու», ինչից հետո դիմել է ոստիկանություն: Ստեղծված անտանելի իրավիճակի եւ հոգեբանական ճնշումների պատճառով հաշվապահն արդեն պաշտոնապես դիմել է ՀՀ հակակոռուպցիոն մարմիններին՝ խնդրելով իրավական պաշտպանություն եւ հարցի օրինական լուծում: Տնօրենի կողմից հաշվապահին ուղղված այս բացահայտ սպառնալիքներին, շանտաժին եւ հոգեբանական տեռորին ականատես են եղել քոլեջի եւս 7 աշխատակիցներ: Տեսնելով կատարվող անօրինականությունները եւ մտահոգություն ունենալով, որ իրենք նույնպես կարող են դառնալ նմանատիպ ստոր հետապնդումների զոհ, այդ 7 աշխատակիցներն արդեն դիմում են ներկայացրել՝ աշխատանքից ազատման համար»:

ԱՂԱՍԻ ԽԱՆՋՅԱՆ. ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՖԵՆՈՄԵՆ, 6-ԱՄՅԱ ՀԱՆՃԱՐԵՂ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

20-րդ դարի հայոց պատմության ամենաբարդ, հակասական եւ միեւնույն ժամանակ դրամատիկ էջերը կապված են խորհրդային ժամանակաշրջանի, մասնավորապես՝ 1930-ական թվականների ստալինյան բռնապետության հաստատման հետ:



Այդ դարաշրջանը ծնեց լիդերների նոր տեսակ, որոնք ստիպված էին քայլել ածելու սայրի վրայով՝ մի կողմից հավատարիմ մնալով համաշխարհային պրոլետարական հեղափոխության կոշտ գաղափարախոսությանն ու կենտրոնի (Մոսկվայի) հրահանգներին, մյուս կողմից՝ փորձելով փլատակներից հառնող հայրենիքի համար ստեղծել զարգացման ու գոյատեւման հնարավորություններ: Այս համատեքստում Աղասի Խանջյանի կերպարը ոչ միայն առանձին պետական-կուսակցական գործչի կենսագրություն է, այլ հավաքական ողբերգություն, որն արտացոլում է ամբողջատիրական համակարգի ներսում ազգային ինքնության պահպանման դժվարին, գրեթե անհնարին առաքելությունը:

Խանջյանը Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը ստանձնեց 1930 թվականին՝ մի ժամանակահատվածում, երբ երկիրը դեռ չէր ապաքինվել առաջին աշխարհամարտի, ցեղասպանության եւ քաղաքացիական կռիվների վերքերից: Նրա 6-ամյա կառավարումը դարձավ աննախադեպ շինարարության, մշակութային վերածննդի, բայց նաեւ՝ անձնական ու քաղաքական խոր դրամայի շրջան: Խանջյանը համոզված կոմունիստ էր. անդամագրվել էր կուսակցությանը պատանի տարիքում, անցել հեղափոխական ընդհատակի բովով Վանում, Թիֆլիսում եւ Լենինգրադում: Սակայն, ի տարբերություն շատերի, նրա համար Խորհրդային Հայաստանը լոկ վարչական միավոր չէր, այլ հայության վերջին հանգրվանն ու տունը: Խանջյանի կառավարման ռազմավարությունը հիմնված էր նուրբ ու վտանգավոր հաշվարկի վրա՝ ցույց տալ Մոսկվային, որ Հայաստանը տնտեսապես եւ գաղափարապես ամենահավատարիմ հանրապետություններից է, որպեսզի այդ հավատարմության դիմաց կորզի ներքին ինքնավարության որոշակի սահմաններ: 1933-ի իր ելույթներից մեկում նա պատկերավոր ձեւակերպել է իր կրեդոն. «Մենք պետք է կառուցենք մեր սոցիալիստական տունը, բայց այդ տան պատերը պետք է շարվեն հայկական տուֆով, եւ այնտեղ պետք է լսվի հայերեն խոսքը»:

Այս մոտեցման շնորհիվ էր, որ Խանջյանի օրոք կոլեկտիվացման եւ ինդուստրացման կոշտ գործընթացները Հայաստանում ընթացան համեմատաբար մեղմ ու նվազ արյունալի, քան Ուկրաինայում կամ Ղազախստանում: Նա ամեն կերպ փորձում էր մեղմել կենտրոնից եկող հարվածները՝ մանեւրելով եւ անձնական պատասխանատվություն վերցնելով սեփական Ժողովրդի համար: Եթե տնտեսության մեջ Խանջյանը ստիպված էր հետեւել պլանային համակարգի կոշտ կանոններին, ապա մշակույթի եւ կրթության ոլորտում նա ցուցաբերեց բացառիկ ազգային կողմնորոշում: 1930-ականների առաջին կեսին Երեւանը դարձավ հայ մտավորականության հավաքագրման կենտրոն: Խանջյանը հստակ գիտակցում էր, որ առանց հզոր մշակութային էլիտայի՝ պետությունն ապագա չի ունենա: Նրա անմիջական հովանավորությամբ եւ պաշտպանությամբ էին ստեղծագործում Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Մարտիրոս Սարյանը, Ալեքսանդր Թամանյանը: Խանջյանի եւ Չարենցի հարաբերությունները դուրս էին պաշտոնական կամ կուսակցական շրջանակներից: Դա երկու բացառիկ անհատների դաշինք էր, որտեղ քաղաքական գործիչը հասկանում էր հանճարի արժեքը, իսկ պոետը՝ քաղաքական գործչի առաքելության ծանրությունը: Երբ Չարենցը հայտնվում էր հարվածների տակ, երբ պրոլետարական գրողները նրան մեղադրում էին «նացիոնալիզմի» եւ «բուրժուական մնացուկ» լինելու մեջ, Խանջյանն օգտագործում էր իր ողջ հեղինակությունը՝ բանաստեղծին «փրկելու» համար: Այս հովանավորչությունը տարածվում էր նաեւ ճարտարապետության վրա: Ալեքսանդր Թամանյանի նախագծած Երեւանը՝ իր ազգային էլեմենտներով եւ վարդագույն տուֆով, մեծապես կյանքի կոչվեց Խանջյանի քաղաքական կամքի շնորհիվ: Կենտրոնից եկող մեղադրանքներին, թե Թամանյանի նախագծերը չափազանց թանկ են եւ «արխայիկ», Խանջյանը հպարտորեն պատասխանում էր, որ հայերը կառուցում են դարերի համար:

Խանջյանի ղեկավարման կարճ շրջանը դարձավ Խորհրդային Հայաստանի թռիչքային արդիականացման եւ ինդուստրիալ-մշակութային հեղափոխության ամենաարգասաբերը: Երկիրը կիսավեր, ագրարային ծայրամասից վերածվեց հզոր արտադրական ու գիտական կենտրոնի: Նրա նախաձեռնությամբ կյանքի կոչվեց Թամանյանի հանճարեղ «Կանաչ քաղաք» գլխավոր հատակագիծը, հիմնադրվեցին Օպերայի եւ բալետի թատրոնի, կառավարական շենքերը, կառուցվեցին Քանաքեռ ՀԷԿ-ը, Զորագետի հիդրոէլեկտրակայանը (ԶորաՀԷԿ-ը), սկիզբ դրվեց «Նաիրիտի», Արարատի ցեմենտի գործարանի, Կիրովականի քիմկոմբինատի հիմնադրմանը, Ալավերդու պղնձաձուլական արդյունաբերության հզորացմանը: Կրթական ու մշակութային ոլորտում հիմնադրվեցին Երեւանի պետական կոնսերվատորիան, Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը, Կուլտուրայի պատմության ինստիտուտը, Պետական պատկերասրահը, բացվեցին հարյուրավոր նոր դպրոցներ ու գրադարաններ: Նրան հաջողվեց հայրենիք վերադարձնել աշխարհասփյուռ հայ մտավորականության սերունդը, որն ապահովեց հայոց ազգային գենոֆոնդի ու ինքնության հարատեւումը հետագա տասնամյակների համար:

Խանջյանի գործունեության ամենաքիչ լուսաբանված, բայց ամենաարժեքավոր էջերից մեկը կապված է հայկական տարածքների պահպանման եւ վերադարձի ջանքերի հետ: Նա բացահայտորեն դեմ էր 1921 թ. Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերով գծված սահմաններին: 1930-ականների կեսերին նա պաշտոնական նամակներով եւ զեկուցագրերով դիմեց Մոսկվային՝ հիմնավորելով, որ Լեռնային Ղարաբաղի տնտեսական եւ մշակութային կապերը շատ ավելի սերտ են Երեւանի, քան Բաքվի հետ, եւ բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր են: Ավելին, Ստալինի հետ անձնական հանդիպումների ժամանակ նա համարձակություն ունեցավ ուղղակիորեն բարձրացնելու ԼՂԻՄ-ը եւ Նախիջեւանը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու հարցը: Այս քայլը բացահայտ մարտահրավեր էր Լավրենտի Բերիային, որն այդ ժամանակ Անդրկովկասի երկրկոմի առաջին քարտուղարն էր եւ վարում էր ընդգծված հակահայկական քաղաքականություն: Խանջյանի այս կուրսը նրան դարձրեց թիրախ: Թիֆլիսում գտնվող Անդրկովկասի ղեկավարությունը նրա մեջ տեսնում էր վտանգ, որը կարող է արթնացնել ազգային-ազատագրական գաղափարները տարածաշրջանում:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՊԱՏՆԵՇԸ

Որպեսզի ավելի հստակ երեւա Խանջյանի կերպարի բացառիկությունը, այն համեմատենք նույն շրջանի այլ խորհրդային լիդերների հետ: Միր Զաֆար Բաղիրովը (Ադրբեջանում), Լավրենտի Բերիան (Վրաստանում) ստալինյան կուրսի կույր կատարողներն էին եւ իրենց իշխանությունը կառուցում էին բացառապես տեռորի, մատնությունների ու արյան վրա: Նրանց համար սեփական Ժողովրդի զոհերը միայն վիճակագրություն էին՝ ստալինյան հնգամյա պլանները կատարելու ճանապարհին: Մյուս կողմից, կային Խանջյանի նման լիդերներ, որոնք հավատում էին, որ հնարավոր է համատեղել մարքսիզմը եւ ազգային վերածնունդը: Ուշագրավ է, որ այս բոլոր լիդերների ճակատագիրը դասավորվեց գրեթե նույն սցենարով. նրանք՝ բոլորն էլ կամ «ինքնասպան» եղան, կամ ֆիզիկապես ոչնչացվեցին 1930-ականների երկրորդ կեսին: Խանջյանը տարբերվում էր նրանով, որ գործում էր մի ազգի անունից, որը դեռ նոր էր տեսել էկզիստենցիալ աղետ՝ ցեղասպանություն: Նրա յուրաքանչյուր սխալ կարող էր հանգեցնել ոչ թե պարզապես քաղաքական կուրսի փոփոխության, այլ հայության մնացորդների վերջնական բնաջնջման: Այս գիտակցումը նրա կերպարին հաղորդում էր հատուկ, վեհ պատասխանատվություն: Նա կուսակցական սովորական ֆունկցիոներ չէր. նա ազգի ինքնապաշտպանական պատնեշն էր:

ԿՐԱԿՈՑ, ՈՐԸ ԾՆԿԻ ԲԵՐԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԸ

1936 թվականի հուլիսի սկիզբ. հայոց պատմության ամենամռայլ էջերից մեկի մեկնարկն էր: Աղասի Խանջյանին կանչեցին Թիֆլիս՝ Անդրկովկասյան երկրկոմի նիստին: Օդում արդեն զգացվում էր մեծ տեռորի շունչը: Բերիան արդեն հավաքել էր «ապացույցներ» Խանջյանի «նացիոնալիստական հակումների» եւ «չարենցյան խմբակի» հետ կապերի մասին: Հուլիսի 9-ին Բերիայի աշխատասենյակում հնչած կրակոցներն ընդհատեցին 35-ամյա ղեկավարի կյանքը: Պաշտոնական վարկածը՝ ինքնասպանություն, հնչում էր որպես ծաղր: Ոչ ոք չէր հավատում, որ կենսախինդ, ուժեղ, հաստատակամ Խանջյանը կարող էր ինքնասպան լինել Թիֆլիսում՝ իր քաղաքական ոխերիմ հակառակորդի կաբինետում: Ժամանակակիցներն իրենց հուշերում գրում էին. «Նա չսպանեց իրեն: Նրան սպանեց այն համակարգը, որին նա ծառայում էր, բայց որի կանոններով չկարողացավ խաղալ մինչեւ վերջ, որովհետեւ սիրտը հայերեն էր բաբախում»: Խանջյանի մահն ահռելի հարված էր Հայաստանին: Չարենցը, լսելով այդ գույժը, կատարեց իր կյանքի ամենահամարձակ եւ ողբերգական քայլը՝ գրեց իր հանճարեղ սոնետաշարը՝ «Դոֆին նաիրական»-ը, որտեղ տողերի արանքում մեղադրում էր Բերիային սպանության մեջ: Բանաստեղծը հավանաբար գիտակցում էր, որ դրանով ստորագրում է նաեւ իր մահվան դատավճիռը: Խանջյանի հուղարկավորությունը Երեւանում վերածվեց համազգային սգի եւ լուռ, ահազդու բողոքի ցույցի: Մարդիկ հասկանում էին, որ Խանջյանի հետ մեռնում է իրենց անվտանգության եւ մշակութային ազատության վերջին պատվարը: Եվ իրոք, նրա մահից ամիսներ անց սկսվեց հայ մտավորականության հունձը. ձերբակալվեցին ու սպանվեցին Բակունցը, Չարենցը, Թոթովենցը եւ հազարավոր ուրիշներ: Խանջյանը նման էր այն ճարտարապետին, որը փորձում էր տաճար կառուցել գործող հրաբխի վրա: Նա գիտեր, որ լավան վաղ թե ուշ ծածկելու է ամեն ինչ, բայց շարունակում էր խնամքով հղկել յուրաքանչյուր քարը, որովհետեւ հավատում էր՝ հրաբուխը կհանգչի, իսկ քարե մատյանը կմնա: Խանջյանի մարմինը թաղվեց անշուք, հետո նրա անունը տասնամյակներով հանվեց պատմության դասագրքերից: Սակայն նրան ջնջել Ժողովրդի հիշողությունից՝ չհաջողվեց:

Այսօր, երբ մենք քայլում ենք Թամանյանի նախագծած վարդագույն Երեւանով, հիանում ենք Օպերայի շենքով կամ կարդում Չարենցի գլուխգործոցները, պետք է հիշենք, որ այդ ամենի հիմքում դրված է նաեւ այն կրակոցի արձագանքը, որը հնչեց 1936-ի հուլիսյան այդ սեւ օրը, Թիֆլիսում: Կան գործիչներ, որոնք պատմության մեջ մնում են իրենց հաղթանակներով, եւ կան գործիչներ, որոնք պատմությունը կերտում են իրենց ողբերգական նահատակությամբ: Աղասի Խանջյանը հայության այն հազվագյուտ լիդերներից է, որն ապացուցեց՝ անգամ ամենամռայլ կայսրությունում հնարավոր է մնալ Մարդ, պահպանել Ազգը եւ մեռնել այնպես, որ մահդ դառնա հայրենիքի վերածննդի գաղտնի սերմը:

Հետգրության փոխարեն: Այս տարի մեկտեղվել են հայոց ճակատագրի երկու խորհրդավոր տարեթվեր՝ Աղասի Խանջյանի ծննդյան 125-ամյա հոբելյանը եւ նրա խորհրդավոր ու ողբերգական մահվան 90-րդ տարելիցը: Ղեկավարելով Խորհրդային Հայաստանը ընդամենը 6 տարի՝ նա կարողացավ անել անհնարինը: Ճիշտ 125 տարի առաջ նա լույս աշխարհ եկավ պատմական Վանում՝ իր հետ բերելով հին նաիրցիների կամքն ու ոգին, եւ ուղիղ 90 տարի առաջ նրա սիրտը դադարեց բաբախել: Մեծն Եղիշե Չարենցն անդառնալի կորստի ու կատաղի ցավի այդ օրերին նրան կոչեց «Նաիրյան Դոֆին»՝ ազնվացեղ արքայազն, որն այդպես էլ չբազմեց երկրային գահին, բայց ընդմիշտ մնաց իր Ժողովրդի հիշողության մեջ: Այս անդրադարձը խոնարհումի եւ երախտիքի լուռ տուրք է այն բացառիկ հայորդուն ու պետական գործչին, որն ապրեց ընդամենը 35 տարի, բայց սեփական կյանքի գնով կերտեց մի ողջ դարաշրջան՝ ապրելով ակնթարթային, բայց լուսավոր կյանք՝ իրենից հետո թողնելով անջնջելի կոթող՝ վերածնված հայրենիքը:

Աղասի ՂՈՐԽՄԱԶՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ ԴԱՇՆԱԿԻՑ ԼԻՆԵԼԸ ԽԱՆԳԱՐՈՒՄ ԷՐ ԱՅԴ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՅԼՆ ԱՆԵԼՈՒՆ



Արա ԱԼՈՅԱՆ

«Կարծում եմ, որ սա շատ կարեւոր միջոցառում է, որը ձեռնարկել է Իսրայելի կառավարությունը, քանի որ դա տարածված միտք էր Իսրայելում, ինչպես շատ այլ երկրներում, որն իրականում տեղի է ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Դա տարածված էր, բոլորը համաձայն էին դրա հետ եւ բոլորը համաձայն էին, որ մենք պաշտոնական քայլ չենք անում Թուրքիայի հետ հարաբերությունների պատճառով, որը շատ ագրեսիվ էր ցեղասպանության ճանաչման հարցում, քանի դեռ մենք դեռ դաշնակիցներ էինք: Երկար տարիներ իսրայելցիների մեծ մասը նույնպես չի ճանաչել այս ցեղասպանությունը: Այսինքն՝ սա ոչ միայն քաղաքական քայլ է, այլեւ մի բան, որին հավատում էր իսրայելցիների մեծ մասը, եւ մենք գիտեինք, որ մեզ խանգարում էր ճիշտ բան անել, կասեի՝ դիվանագիտական շահերի պատճառով»,-այս մասին «Հրապարակի» հետ զրույցում ասաց իսրայելցի քաղաքագետ **Հարել Խորեւը**՝ մեկնաբանելով Իսրայելի կառավարության՝ Հայոց ցեղասպանության ճանաչման մասին որոշումը:

Նա նշում է՝ մի քանի տարի առաջ հրեա գիտնականները գիրք են հեղինակել, որում անդրադարձել են Հայոց ցեղասպանությանը, ինչպես նաեւ՝ հույների եւ այլ ազգերի ցեղասպանություններին, որոնք տեղի են ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: «Հայաստանի դեպքում հաշվի է առնվել Ադրբեջանի գործոնը, որովհետեւ այդ երկիրն Իսրայելի ուժեղ դաշնակիցն է, այդ թվում՝ նաեւ Իրանում տեղի ունեցող ցանկացած գործողության հարցում: Այո, դա այս բարդույթի մի մասն է»,- նկատում է մեր զրուցակիցը:

Ինչ վերաբերում է Իսրայելի վարչապետի դրական արձագանքին՝ կապված Հայոց ցեղասպանության ճանաչման հետ, եւ այն հայտարարությանը, թե սատարում է այդ որոշմանը, Խորեւն ասում է. «Այո՛, նա արեց դա: Նա դա ասել է դեռ մի քանի ամիս առաջ: Եվ կարծում եմ, որ այն, ինչ մենք վերջերս տեսանք արտաքին գործերի նախարարության կողմից, ցույց է տալիս, որ, որքան ես գիտեմ, Կնեսետն արդեն դրական որոշում է կայացրել այդ բանաձեւի օգտին»:

Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության վերջնական եւ պաշտոնական ճանաչմանը Բաքվի եւ Անկարայի կողմից խոչընդոտելու հավանականության մասին դիտարկմանն ի պատասխան՝ իսրայելցի փորձագետն ասաց. «Իհարկե, Ադրբեջանին դա այդքան էլ դուր չի գա, բայց նրանք հասկանում են մեր հետաքրքրությունն այս հարցում: Եվ նա ոչինչ չի ասում Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին: Այո, դա իրականում այցեքարտ է, այո, կառավարության: Եվ դա, այո, պետք է պարզ լինի: Եթե կատարվել է ցեղասպանություն, հայերի, հրեաների, միլիոնավոր մարդիկ սպանվել են, պետք է անպայման ընդունել այդ փաստը, ոչ թե մերժել: Եվ դա արդեն մարդկային բարոյական պարտքի հարց է»:

Սեւանում հանգիստը 350 հազար դրամ է, Քոբուլեթիում՝ 80 հազար

Ամռան ամիսներին Հայաստանի հանգստյան գոտիներում այցելուների հոսքը զգալիորեն աճում է: Ինչ պատկեր է հանգստավայրերում այս տարի՝ 2026-ի ամռանը. կապ հաստատեցինք մի շարք հանգստյան տների հետ՝ ճշտելու ծառայությունների արժեքը, ազատ տեղերի առկայությունը, այցելուների քանակը՝ նախորդ տարվա համեմատ: Հատկապես հուլիս-օգոստոս ամիսներին են մարդիկ արձակուրդ վերցնում եւ հանգստի մեկնում: Գաղտնիք չէ, որ Հայաստանում հանգիստը բավականին թանկ արժե: Պարզվում է՝ Ծաղկաձորի եւ Սեւանի հանգստի մեկօրյա արժեքով կարելի է հարեւան Վրաստանում՝ Սեւ ծովի ափին մեկ շաբաթ հանգստանալ: Կապ հաստատեցինք Ծաղկաձորի Marriott Armenia հյուրանոցի ադմինիստրացիայի հետ: Տեղեկացանք, որ ստանդարտ համարի արժեքը 68 հազար դրամ է: Գնի մեջ ներառված են նախաճաշը, լողավազանը, շոգեբաղնիքը եւ մարզասրահը: Հյուրանոցի աշխատակցի խոսքով՝ այս օրերին այցելուների մեծ հոսք դեռեւս չկա, սակայն ակնկալվում է, որ իրավիճակը կփոխվի հուլիսի 3-4-ին նախատեսված գինու փառատոնի օրերին, որը կայանալու է Ծաղկաձորում: Նիկոլ Փաշինյանի հայրական գյուղի՝ Ենոքավանի պոպուլյար դարձած «Լաստիվեր Ռեզորթ» հյուրանոցում հուլիսի 1-ից նկատվում է սեզոնային թանկացում: Եթե նախկինում ստանդարտ համարը՝ նախաճաշով, լողավազանով եւ ջակուզիով, արժեր 35 հազար դրամ, հիմա 55 հազար է: Դիլիջանի «Դիլի Թաուն» հյուրանոցում, ի տարբերություն Ծաղկաձորի եւ Ենոքավանի, այդ պահին ազատ տեղեր չկային, իսկ թանկացումը, ինչպես մեկնաբանեց աշխատակիցը, կախված է պահանջարկից: «Դիլի Թաունն» առաջարկում է նաեւ առանձնացված քոթեջներ՝ նախատեսված ավելի հարմարավետ հանգստի համար: Գնի մեջ ներառված է նաեւ նախաճաշը: Ստանդարտ համարի արժեքը սկսվում է 58 հազարից: Ծաղկաձորի «Էլեգանտ» հյուրանոցում ստանդարտ համարի արժեքը, նախաճաշը ներառյալ, կազմում է 34 հազար դրամ: Լյուքս համարի արժեքը, օրինակ՝ չորս մեծահասակի դեպքում, 70 հազար դրամ է՝ նույնպես նախաճաշով: Ցանկության դեպքում կարելի է պատվիրել նաեւ ընթրիք, որի արժեքը 1 անձի համար 6 հազար դրամ է:

Սեւանի «Հարսնաքար» հյուրանոցում ստանդարտ համարի մեկ օրն արժե 50 հազար դրամ՝ ներառյալ նախաճաշը: Այսինքն, 7-օրյա հանգիստը կազմում է 350 հազար դրամ: Մենք նաեւ փոքրիկ ուսումնասիրություն կատարեցինք, թե ինչ գներ են Վրաստանի Քոբուլեթի քաղաքում: Այն բավականին մատչելի հանգստավայր է՝ 7-օրյա հանգստի արժեքը սկսվում է 80 հազար դրամից:

Շուշան ՍԱՐԻԿՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 2.07.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՈՉ ԹԵ ՔՆՆԱԴԱՏԵՆՔ ԻՍՐԱՅԵԼԻՆ, ԱՅԼ ՆՐԱ ՔԱՅԼԸ ՄԵՐ ՇԱՀԵՐԻՆ ԾԱՌԱՅԵՑՆԵՆՔ

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Դատելով Իսրայելի կառավարության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ներհայաստանյան արձագանքներից, պետք է արձանագրենք, որ այս անգամ եւս մենք ամեն ինչ կարծես սխալ ենք հասկանում: Մենք միշտ ամենակարեւոր պահին շատ կարեւոր բաներ «կարողանում» ենք սխալ հասկանալ:

Այս իմաստով, հարցը ո՛չ Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանությունը Թուրքիայի վրա որպես ճնշման գործիք օգտագործելն է, ո՛չ էլ դրա հետ կապված Թուրքիայում եւ Ադրբեջանում բարձրացված վայնասունը: Հարցը ցեղասպանության ու դրա հետեւանքների վերացման մասին մեր ունեցած պատկերացումները չփոխելն է: Տեսեք, 110 տարուց ավելի մենք պայքարեցինք ցեղասպանության ճանաչման համար եւ հասանք նրան, որ աշխարհի շատ կարեւոր երկրներ ու միջազգային կարեւոր կազմակերպություններ ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը: Սա, անշուշտ, մեր կազմակերպվածության ու վճռականության լավագույն ապացույցն է: Սակայն հիմա արդեն ցեղասպանության եւ իրավունքների վերականգնման համար մեր պայքարը՝ ցեղասպանության ճանաչման փուլից դուրս բերելու եւ այն ցեղասպանության հետեւանքների վերացման փուլ տեղափոխելու ժամանակն է:

Այս առումով, ցեղասպանության հետեւանքները վերացնելը միայն Թուրքիայի կողմից ցեղասպանությունը ճանաչելը եւ նրա հետեւանքների վերացման համար պատասխանատվություն ստանձնելը չէ: Ցեղասպանության հետեւանքները վերացնելը նաեւ ցեղասպանությունը ճանաչած երկրների կողմից ցեղասպանության հետեւանքով իրենց երկրներում հայտնված հայերի ու հայկական կազմակերպությունների համար գիտաարտադրական, սոցիալ-տնտեսական եւ այլ տիպի արտոնություններ սահմանելն է: Մենք, իհարկե, բարձր ենք գնահատում ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի եւ ցեղասպանությունը ճանաչած մյուս երկրների կողմից ցեղասպանության ճանաչման հարցում դրսեւորած կամքն ու վճռականությունը: Բայց մեր սպասելիքներն իրենցից ու ողջ մարդկությունից ոչ թե ցեղասպանության փաստի արձանագրումն ու ճանաչումն է, այլ դրա հետեւանքների վերացումը:

Այս տեսակետից գնահատելով Իսրայելի տեխնոլոգիական ու գիտաարտադրական կարողությունները եւ այդ կարողությունների կոնտեքստում այդ երկրի կառավարության կողմից ցեղասպանությունը ճանաչելու նրա նախաձեռնությունը, պետք է արձանագրենք, որ այդ նախաձեռնությունը ցեղասպանության ճանաչման նախաձեռնություն լինելուց բացի, նաեւ Իսրայելի հայկական համայնքի զարգացման եւ Հայաստանի Հանրապետության եւ Իսրայելի միջեւ գիտաարտադրական եւ տեխնոլոգիական համագործակցության համար լավ պայմաններ ստեղծելու մասին նախաձեռնություն է:

Այս իմաստով, ես ինչքան էլ փորձում եմ, բայց այդպես էլ չեմ հասկանում նրանց, ովքեր Իսրայելի կառավարության այդ նախաձեռնությունում հայության ու Հայաստանի շահը փնտրելու փոխարեն այդ նախաձեռնությունը՝ Գազայում Իսրայելի գործողությունների կամ թե Թուրքիա-Իսրայել հարաբերությունների հետ են կապում: Չեմ հասկանում, որովհետեւ համարում եմ, որ ոչ թե մենք, այլ Իսրայելն է, որ իր անվտանգությունը Գազայով է սահմանել: Իսրայելն է որոշել, որ Գազայով անցնող իր անվտանգության սահմանը պետք է հենց այն ձեւով պաշտպանի, ինչ ձեւով որ պաշտպանում է:

Եվ, վերջապես, չեմ հասկանում, որովհետեւ համարում եմ, որ մեր խնդիրը ոչ թե այն է, որ Իսրայելը ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի վրա ճնշում գործադրելու համար չօգտագործի, այլ այն է, որ մենք կարողանանք այդ ճանաչումն Իսրայելում ապրող հայերի համար արտոնություններ ստանալու եւ Հայաստան-Իսրայել հարաբերությունները տեխնոլոգիական ու գիտաարտադրական համագործակցության ռելսերի վրա տեղափոխելու համար օգտագործենք:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am